

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

ԱՐԺԵՔՆԵՐ, ՎԱՏԱՀՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ

Սերգեյ Մինասյան

KAS քաղաքականության փաստաթուղթ
Երևան, հունիս, 2026



Ամփոփում

Հայաստանի և Եվրոպական Միության միջև հարաբերությունները թևակոխել են որակապես նոր փուլ: 2024-2026 թվականների միջև ընկած ժամանակահատվածում ներառյալ Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգի հաստատումը և գագաթնակետը՝ Երևանում Եվրոպական խոշոր քաղաքական գագաթնաժողովների հաջողությամբ անցկացումը և 2026 թվականի խորհրդարանական ընտրություններից հետո Հայաստանի ներկայիս կառավարության համար նորացված բարեփոխումների մանդատի ամրապնդումը, Հայաստանի հեղինակությունը Եվրոպական ավելի լայն քաղաքական տարածքում բարձրացել է նոր մակարդակի:

Այդուհանդերձ, Հայաստան-ԵՄ հարաբերությունների տեսանելիությունը չպետք է շփոթել իրական վերափոխման հետ: Սույն քաղաքականության փաստաթղթի հիմնական եզրակացությունն այն է, որ Հայաստանի Եվրոպական հետագիծն այլևս սահմանափակված չէ միայն Եվրամիության ներգրավվածության աստիճանով, այլ գնալով ավելի մեծ նշանակություն են ձեռք բերում ներքին գործոնները: ԵՄ-ն Հայաստանի հանդեպ ցուցաբերել է քաղաքական հասանելիություն, ֆինանսական աջակցության և ինստիտուցիոնալ աջակցության շատ բարձր մակարդակ:

Առավել էական սահմանափակումները գնալով ներքին բնույթ են կրում. դրանք վերաբերում են կառավարման որակին, ժողովրդավարական ինստիտուտների կայունությանը, բարեփոխումների իրականացման արժանահավատությանը և հանրության վստահությունը պահպանելու քաղաքական գործիչների կարողությանը ինտեգրման երկարատև և անխուսափելիորեն անհավասար ամբողջ գործընթացում:

Փաստաթղթում հիմնավորվում է, որ Հայաստանի Եվրոպական օրակարգը չպետք է ընկալվի միայն աշխարհաքաղաքականության նեղ տեսանկյունից: Թեպետ տարածաշրջանային անվտանգային զարգացումները, ավանդական անվտանգությունն ապահովողների նկատմամբ վստահության խարխիլումը և 2020-2023 թվականների իրադարձությունների հետևանքներն արագացրել են Հայաստանի մերձեցումը Եվրոպայի հետ, սակայն ինտեգրման երկարաժամկետ նշանակությունը գտնվում է այլ հարթությունում: Իր Էությունը

Եվրոպական Նախագիծը Հայաստանին առաջարկում է կառույցների ամրապնդման, կառավարման բարելավման, տնտեսական հարաբերությունների դիվերսիֆիկացման, հասարակության դիմակայունության բարձրացման և քաղաքացիների համար հնարավորությունների ընդլայնման շրջանակ:

Միևնույն ժամանակ սպասումները պահանջում են ուշադիր հաշվարկ: Եվրոպական Միությունը ռազմական դաշինք չէ և (առայժմ) չի կարող ապահովել հավաքական պաշտպանության երաշխիքներ: ՀԸԳՀ-ն Ասոցացման համաձայնագիր չէ և չի ստեղծում անդամակցության ուղիղ ճանապարհ: Այս իրողությունները չեն նվազեցնում գործընկերության արժեքը, բայց սահմանում են դրա գործնական սահմանները:

Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի համեմատական փորձը ցույց է տալիս, որ Եվրոպական ինտեգրումը ո՛չ գծային է, ոչ էլ անշրջելի: Օրենսդրության մոտարկումը հաճախ ավելի արագ է տեղի ունենում, քան ինստիտուցիոնալ վերափոխումը: Ֆորմալ համապատասխանությունն ինքնաբերաբար չի հանգեցնում վարքային փոփոխության: Բարեփոխումների կայունությունը կախված է ներքաղաքական միջավայրից, կառույցների անկախությունից, քաղաքացիական հասարակության ակտիվությունից և հաշվետվողականության նկատմամբ հանրային շարունակական պահանջից:

Հայաստանի համար հաջորդ տասնամյակի Եվրոպական ինտեգրման գործընթացում հատկապես կարևոր են դառնում չորս առաջնահերթություն. վիզաների ազատականացման գործընթացի ավարտը, դատաիրավական համակարգի իմաստալից բարեփոխումները, Էներգիայի աղբյուրների շարունակական դիվերսիֆիկացիան և առավել խոր ինտեգրումը Եվրոպական թվային ու Նորարարական Էկոհամակարգերին: Այս բոլոր առաջնահերթությունների հիմքում ընկած է ավելի արդյունավետ ռազմավարական հաղորդակցության անհրաժեշտությունը, որը կարող է կամրջել հանրային սպասումների և ինտեգրման գործնական իրողությունների միջև աճող անջրպետը:

Լինելով ոչ թեկնածու երկիր՝ վերջին տարիներին Հայաստանը աննախադեպ գործընկերություն է հաստատել Եվրոպական Միության հետ: Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ/CEPA) իրականացման, Հայաստանում ԵՄ դիտորդական առաքելության (ՀԵՄԱ/EUMA) տեղակայման, ինչպես նաև ոչ կինետիկ և հիբրիդային սպառնալիքների դեմ պայքարին ուղղված ԵՄ երկրորդ առաքելության (ՀԳԱՄ /EUPMA) ներկայիս տեղակայման, Եվրոպական խաղաղության հիմնադրամի և Դիմակայունության և աճի ծրագրի միջոցով ոչ մահացու աջակցության, ինչպես նաև վիզաների ազատականացման գործընթացի (ՎԱԳԾ/VLAP) մեկնարկի միջոցով Հայաստանն առաջ է մղել բազմաչափ ինտեգրման գործընթացը: Հայաստանի Խորհրդարանի կողմից 2025 թվականին «Եվրոպական Միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» օրենքի ընդունումը, որին հաջորդեց ԵՄ-ՀՀ գործընկերության երկկողմ ռազմավարական օրակարգը, էլ ավելի ինստիտուցիոնալացրեց այս ուղղությունը:

2026 թվականի մայիսին կայացած երևանյան երկու գագաթնաժողովները, ըստ էության, իսկապես պատմական էին: Եվրոպական քաղաքական համայնքի 8-րդ գագաթնաժողովը Հայաստանի մայրաքաղաք բերեց 48 երկրի ներկայացուցիչների, որը նաև հարմար վայր էր Եվրոպական բազմաթիվ երկրների միջև ռազմավարական երկխոսության զանազան միջոցառումների համար: Եվրոպական խորհրդի նախագահ Կոշտան ասաց այն, ինչ պետք է ասվեր. «Այն փաստը, որ Հայաստանը հյուրընկալում է այս գագաթնաժողովը, երկրի համարձակ աշխարհաքաղաքական ուղու համոզիչ օրինակ է»¹: Հաջորդ օրը տեղի ունեցավ ԵՄ-Հայաստան առաջին երկկողմ գագաթնաժողովը, որի ընթացքում Ուրսուլա ֆոն Լայենը և Նիկոլ Փաշինյանը ստորագրեցին մի փաստաթուղթ, որը երկու կողմերն էլ բնութագրեցին որպես նոր գլխի բացում հարաբերություններում:

¹<https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2026/05/04/press-statement-by-president-antonio-costa-following-the-meeting-of-the-european-political-community/>

Արժե ճշգրիտ թվարկել հստակ արդյունքները, քանի որ հենց դրանք են հետագայում գործընկերության իրականացման արդյունավետությունը գնահատելու հիմնական հենանիշներ ծառայելու: Ստորագրվեց ՀՀ-ԵՄ կապակցվածության գործընկերության վերաբերյալ փաստաթուղթը, որը հիմնված էր Էներգետիկայի, տրանսպորտի, թվային ենթակառուցվածքների, արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտները ներառող 30 միլիոն եվրոյի ներդրումային հայտի վրա: Հայաստանը պաշտոնապես հայտարարեց Chips JU-ին, EuroHPC-ին JU-ին, ԵՄ մաքսային և հարկային ծրագրերին Fiscalis ծրագրերին, EU4Health-ին միանալու իր մտադրության մասին, ինչպես նաև վերահաստատեց իր հանձնառությունը բարեփոխումների առաջնությանը սոցիալական քաղաքականության, կրթության (Erasmus+), հետազոտությունների (Horizon Europe) և մշակույթի (Creative Europe) ոլորտներում: Համաձայնություն ձեռք բերվեց արհեստական բանականության ոլորտում համագործակցության վերաբերյալ՝ ըստ ԵՄ արհեստական բանականության մասին օրենքի: Ֆոն դեր Լայենը հստակ ձևակերպեց ռազմավարական տրամաբանությունը. «Հայաստանն ապահովելու է Եվրոպայից դեպի Կենտրոնական Ասիա և Կասպից ծով տանող ամենակարճ ճանապարհը: Հայաստանը կարող է դառնալ տարածաշրջանային կենտրոն»²: Ֆրանսիան և Հայաստանը ստորագրեցին նաև ռազմավարական գործընկերության առանձին երկկողմ համաձայնագիր, որը Հայաստանի և Եվրամիության խոշոր անդամ պետությունների միջև հաստատվող նման ձևաչափի առաջին համաձայնագրերից է: Նշենք, որ գերմանա-հայաստանյան ռազմավարական գործընկերության համաձայնագիրն արդեն իսկ ստորագրվել էր 2025 թվականի դեկտեմբերի 9-ին:

Սակայն գազաթնաժողովները նաև վերհանեցին մի մարտահրավեր, որը պահանջում է անկեղծ արձանագրման. արդյո՞ք տեսանելի քաղաքական աջակցությունը կարող է վերածվել կառուցվածքային կայուն

²<https://www.primeminister.am/en/press-release/item/2026/05/05/Nikol-Pashinyan-Armenia-EU-Summit/>

առաջընթացի: Նոր աշխարհաքաղաքական շրջանակներում Հայաստանը կամա թե ակամա ԵՄ ընդլայնումից հետո ներգրավվածության մոդելի նոր փորձնական դեպք է, որը ցույց է տալիս, թե արդյո՞ք եվրոպական պարտավորությունները կոնկրետ նշանակություն ունեն նույնիսկ այն դեպքում, երբ երրորդ երկրները պահպանում են կառուցվածքային լծակները: Եթե գործընկերության խորացման ներկայիս միտումը պահպանվի, դա կարող է վկայել, որ ԵՄ-ի ներգրավվածության այս մոդելը գործում է և կարող է արդյունք ապահովել անգամ բարդ աշխարհաքաղաքական ճնշումների պայմաններում: Եթե այն կանգ առնի կամ շրջվի, կհաստատվի սկեպտիկների մշտական այն պնդումը, որ ԵՄ ներգրավվածությունը իսկապես վիճելի տարածաշրջաններում, վերջին հաշվով, դեկորատիվ է: Քաղաքական խաղադրույթները զգալիորեն ավելի բարձր են, քան ներկայացված են դիվանագիտական ուղերձներում:

Այժմ՝ գազաթնաժողովներից և Հայաստանում հունիսի 7-ի խորհրդարանական ընտրություններից հետո, տարածաշրջանային արագ փոփոխվող դինամիկայի համատեքստում, պահը պահանջում է առավել հանգիստ և ոչ զգացմունքային հաշվարկ, որը որոշակի ճշգրտությամբ կուսումնասիրի Հայաստան-ԵՄ փոխգործակցության իրական շրջանակը, սահմանափակումները և հնարավորությունները: Ամենից առաջ պահանջվում է պարզել, թե իրատեսորեն ինչ կարող են տալ այս հարաբերությունները, և ինչչեն կարող տալ:

Հայաստանի ներկայիս եվրոպական կողմնորոշումը ոչ միտումնավոր, լայնածավալ ռազմավարության, ոչ էլ ծրագրված քաղաքական հետագծի արդյունք չէ, թեպետ կողմերը նախորդ փուլերում արդեն իսկ ցուցադրել են գործակցության բավականին տպավորիչ արդյունքներ: Եվրոպական վեկտորի ակտիվացումը հիմնականում պայմանավորված էր ռազմավարական կտրուկ վերագնահատմամբ, որը պարտադրվել էր գոյություն ունեցող այլընտրանքների փլուզմամբ: Որքան էլ Եվրոպայի կողմ շրջադարձը ընտրություն էր, ամեն դեպքում այն պայմանավորված էր նաև իրադարձություններով, և այդ տարբերակումը կարևոր է ինչպես գործընկերության կայունությունը, այնպես էլ վերջինիս ժողովրդավարական օրինականությունը գնահատելու համար:

2013 թվականին Վիլնյուսում տեղի ունեցած շրջադարձը կարելի է դիտարկել որպես Հայաստանի եվրոպական ուղեգծի վերիմաստավորում:

Հայաստանի որոշումը՝ Ռուսաստանի ակնհայտ ճնշման տակ Ասոցացման համաձայնագրից հրաժարվելու և փոխարենը Եվրասիական տնտեսական միությանը միանալու, թելադրված էր սառը և հասկանալի տրամաբանությամբ. Ռուսաստանը տրամադրեց անվտանգության երաշխիքներ Ադրբեջանի դեմ, Լեռնային Ղարաբաղի շուրջ պահպանեց այնպիսի ռազմաքաղաքական հավասարակշռություն, որը ծառայում էր հայկական շահերին, սուբսիդավորեց գազը և առաջարկեց Եվրասիական շուկայի մուտք, որից կախված էին հայ արտահանողները: Եվրոպան ցանկալի վայր էր ապագա Հայաստանի համար. սակայն այն չէր առաջարկում այնպիսի քաղաքական և ռազմավարական շրջանակ, որը կանդրադառնար անմիջական անվտանգության իրողություններին: Ընտրությունը ցավոտ էր, բայց ոչ իռացիոնալ:

2020 թվականի պատերազմը քառասունչորս օրում փլուզեց այդ տրամաբանությունը: Ադրբեջանի ռազմական արշավը տապալեց տարածքային ստատուս քվոն, որի վրա 1994 թվականից ի վեր խարսխված էր Հայաստանի արտաքին և անվտանգային քաղաքականությունը: ՀԱՊԿ-ը Էական ոչինչ չառաջարկեց: Ռուսաստանի արձագանքը միտումնավոր չեզոքություն էր ցուցադրում՝ միաժամանակ թույլ տալով, որ իրադարձությունները զարգանան: Երեք տասնամյակի ռազմավարական հաշվարկները փլուզվել էին, և ոչ ոք դեռ չգիտեր, թե ինչ կփոխարինի դրանց:

2023 թվականի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության լուծարումը և մի քանի օրվա ընթացքում ավելի քան 100000 էթնիկ հայերի տեղահանումը բյուրեղացրեց տարիների կուտակված ռազմավարական ձախողումը: Ցնցումը խորն էր ոչ միայն տարածաշրջանից տեղահանված հայ ընտանիքների, այլև հայկական քաղաքական վերնախավի համար, որը քաղաքական օրակարգը տասնամյակներ շարունակ մեծապես կառուցել էր Ղարաբաղյան հարցի շուրջ:

Հայաստանի կառավարության արձագանքը՝ ՀԱՊԿ-ին մասնակցության կասեցումը, ԵՄ ներգրավվածության արագացումը, Արևմուտքի միջնորդությամբ Բաքվի հետ ուղիղ բանակցություններ սկսելը երկրի ներսում ներկայացվեց որպես միտումնավոր ռազմավարական վերակողմնորոշում: Սակայն իրականում Հայաստանի՝ դեպի Եվրոպա տեղաշարժն արտացոլում է ինչպես իրական արժեքներ, այնպես էլ

այլընտրանքների փնտրմամբ պայմանավորված ռազմավարական վերագնահատում: Սրանք միմյանց չեն հակասում, բայց սրանց մեկտեղելը թույլ չի տալիս տեսնելու այն իրական պայմանները, որոնցում կփորձարկվի գործընկերության կենսունակությունը:

Սույն փաստաթղթում վերլուծվում են ԵՄ-ին ինտեգրվելու Հայաստանի ներքին և արտաքին քաղաքական ասպեկտները, ինչպես նաև կառավարման, անվտանգության և տնտեսության ոլորտներում կառուցվածքային առանձնահատկությունները, հնարավորություններն ու սահմանափակումները: Այն հիմնվում է ԱԳ երեք երկրների՝ Մոլդովայի, Ուկրաինայի և Վրաստանի փորձի վրա, որոնք ստացել են Եվրամիության թեկնածու երկրի կարգավիճակ, և վերլուծում է, թե դրանց՝ թե՛ հաջողություններով, թե՛ դժվարություններով ուղեկցված զարգացումները ինչ օգտակար դասեր կարող են լինել Հայաստանի համար: Այն նաև վերլուծում է ավելի լայն տարածաշրջանային համատեքստը և դրա ազդեցությունը Հայաստանի եվրոպական ինտեգրման վրա, ինչպես նաև անկեղծ գնահատում, թե այս փուլում ԵՄ-ն ինչ կարող է իրատեսորեն առաջարկել և ինչ՝ ոչ:

Հիմնական թեզը պարզ է. գործընկերության ներուժն իրական է, կառուցվածքային սահմանափակումները՝ նույնպես, իսկ վերջնական արդյունքն ավելի քիչ կախված կլինի երկկողմ հայտարարությունների որակից, քան Հայաստանի պետական հաստատություններում և տարածաշրջանային շրջանակներում տեղի ունենալիքից, ինչպես նաև այն հանգամանքից, թե արդյոք երկու կողմերն էլ պատրաստ կլինեն ազնվորեն ներկայացնելու իրենց հասարակություններին, թե իրականում ինչ է ենթադրում այս հարաբերությունը:

Հայաստան-ԵՄ ինտեգրման ներքին ասպեկտը

Հայաստանի առավել բարգավաճ, ժամանակակից և հստակորեն եվրոպական ապագայի հեռանկարը՝ համադրված ՀՀ քաղաքացիների համար «առանց վիզայի Եվրոպա» ճանապարհորդելու հնարավորության հետ, դարձավ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության՝ 2026 թվականի հունիսի խորհրդարանական ընտրությունների քարոզարշավի ընթացքում

օգտագործած ամենաարդյունավետ քաղաքական նարատիվներից մեկը:

Այս ուղերձը հատկապես ուժեղ արձագանք գտավ 2026 թվականի մայիսին՝ քվեարկությունից ընդամենը շաբաթներ առաջ երևանում կայացած եվրոպական երկու խոշոր գազաթնաժողովների ժամանակ:

Հիմնական թեզը պարզ է. գործընկերության ներուժն իրական է, կառուցվածքային սահմանափակումները՝ նույնպես, իսկ վերջնական արդյունքն ավելի քիչ կախված կլինի երկկողմ հայտարարությունների որակից, քան Հայաստանի պետական հաստատություններում և տարածաշրջանային շրջանակներում տեղի ունենալիքից, ինչպես նաև այն հանգամանքից, թե արդյոք երկու կողմերն էլ պատրաստ կլինեն ազնվորեն ներկայացնելու իրենց հասարակություններին, թե իրականում ինչ է ենթադրում այս հարաբերությունը:

Իրենց խորհրդանշական և ներքաղաքական արժեքից զատ՝ այս իրադարձությունները ցույց տվեցին, որ Հայաստանը դարձել է ավելի տեսանելի մասնակից ավելի լայն եվրոպական քաղաքական տարածքում: Այնուամենայնիվ, այս զարգացումները չպետք է հանգեցնեն այն սխալ ընկալմանը, թե եվրոպական օրակարգը կարող է մնալ ընտրական մոբիլիզացիայի և ներքաղաքական մրցակցության նպատակներով օգտագործվող զուտ գործիքային քաղաքական ռեսուրս, սակայն տարանջատված ժողովրդավարական համախմբման և ինստիտուցիոնալ վերափոխման խորքային գործընթացներից:

Հայաստանի եվրոպական ուղեգծի ցանկացած լուրջ գնահատում պետք է սկսվի պարզ, սակայն հաճախ անտեսվող իրողությունից. եվրամիության հետ ավելի սերտ ինտեգրման ուղին ընտրող պետությունը ընտրական ժողովրդավարություն է: Դա անկատար ժողովրդավարություն է՝ դեռևս բարդ անցումային փուլում, ներքին և արտաքին զգալի ճնշումների պայմաններում, սակայն, այդուհանդերձ, ժողովրդավարություն: 2026 թվականի հունիսի խորհրդարանական ընտրությունների արդյունքում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը պահպանեց իշխանությունը՝ ստանալով խորհրդարանական մեծամասնություն: Freedom House-ի 2026 թվականի Nations in Transit զեկույցի համաձայն՝ Հայաստանը ստացել է 4.11 ժողովրդավարության միավոր՝ բարելավվելով 2023 թվականի 3.96-ից, սակայն շարունակելով մնալ «անցումային կառավարություն» կատեգորիայում, այլ ոչ թե համախմբված

Ժողովրդավարության:³

Այս տարբերակումն ավելի էական է, քան կարող է սկզբում թվալ: Համախմբված ժողովրդավարություններն ունեն ինստիտուտներ, որոնք կարող են պահպանել ռազմավարական քաղաքական հանձնառությունների շարունակականությունը՝ ընտրական ցիկլերի և կառավարության փոփոխությունների պայմաններում, թեև այդ շարունակականությունը նույնպես երբեք լիովին երաշխավորված չէ: Ի տարբերություն դրա՝ անցումային ժողովրդավարությունները շարունակում են ավելի կախված լինել գործող ղեկավարության քաղաքական նախասիրություններից և առաջնահերթություններից: Հայաստանը ներկայումս ընկնում է վերջին կատեգորիայի մեջ: Հետևաբար, դրա եվրոպական հետագծի կայունությունը սերտորեն կապված է մնում ներկայիս կառավարող ուժի քաղաքական ճակատագրին:

Միևնույն ժամանակ Հայաստանի ներքաղաքական իրավիճակի վերաբերյալ քննարկումներում ընդդիմության դերը հաճախ չափազանց պարզեցված է ներկայացվում: Ընդդիմադիր ուժերին որպես միանշանակ ռուսամետ կամ եվրոպական ինտեգրման նկատմամբ բնույթով թշնամական ներկայացնելը չի արտացոլում Հայաստանի քաղաքական միջավայրի բարդությունը: Օրինակ՝ 2026 թվականի հունիսին կայացած խորհրդարանական ընտրություններին մասնակցած քաղաքական ուժերից առնվազն վեցը ցանկանում էին ԵՄ-ին անդամակցությունը դարձնել քաղաքական առաջնահերթություն:⁴

Այս տեսանկյունից ընդդիմությունը ներառում է նախկին քաղաքական ընտրախավերը, որոնք փորձում են մնացորդային տնտեսական շահերը հավասարակշռել իրական ռազմավարական մտահոգությունների հետ, քաղաքական գործիչներին, որոնց ուշադրության կենտրոնում հիմնականում մնում են Լեռնային Ղարաբաղի կորուստը և Ադրբեյջանի հետ ի հայտ եկող խաղաղ կարգավորման

³Freedom House. *Nations in Transit 2026: Armenia Country Report*. Washington, DC: Freedom House, 2026.

⁴Positioning of the Political Parties and Alliances in Armenia ²⁰²⁶ - Konrad-Adenauer-Stiftung, <https://www.kas.de/de/analysen-und-argumente/detail/-/content/positioning-of-the-political-parties-and-alliances-in-armenia-2026>

պայմանները, և ավելի երիտասարդ, քաղաքացիական կողմնորոշմամբ ընդդիմությանը, որը քննադատում է կառավարության կառավարման գործունեությունը՝ առանց պարտադիր կերպով հակադրվելու Եվրոպայի հետ ավելի սերտ կապերին:

Վերջին խումբն արժանի է հատուկ ուշադրության: Այս խմբի քննադատությունն ուղղված չէ ինքնին Եվրոպական նախագծին, այլ թերևս դրա իրականացման եղանակին: Ընտրովի բարեփոխումների, կոռուպցիայի դեմ պայքարի ոչ հետևողական կիրառման, թույլ ինստիտուցիոնալ հաշվետվողականության և տնտեսական օգուտների անհավասար բաշխման վերաբերյալ մտահոգությունները հակաեվրոպական տրամադրությունների արտահայտություն չեն: Ընդհակառակը, դրանք ներկայացնում են հենց այն ներքին վերահսկողության տեսակը, որը կարող է բարեփոխումների գործընթացն ավելի արժանահավատ, դիմացկուն և կայուն դարձնել ժամանակի ընթացքում, թեպետ այս խմբերից ոչ մեկը նույնիսկ չի մոտեցել ²⁰²⁶ թվականի հունիսի ընտրությունների անցողիկ շեմին:

Եվրոպական ինտեգրման շուրջ ընդհանուր առմամբ դրական հանրային քննարկման տակ թաքնված է ավելի բարդ իրականություն: Դա կարելի է բնութագրել որպես հայ հասարակության մեջ առկա «արժեքների անջրպետ»: Մինչդեռ բնակչության զգալի մասը սկզբունքորեն կողմ է քաղաքական Եվրոպայի հետ ավելի սերտ հարաբերություններին, անորոշությամբ վերաբերվել այն հարցին, թե արդյոք գործող քաղաքական վերնախավը կկարողանա իրականացնել խոստացված վերափոխումները՝ թափանցիկ և արդար ձևով:

Այս մտահոգությունն արտացոլվում է նաև հանրային կարծիքի տվյալներում: IRI կողմից 2026 թվականի գարնանը իրականացված հանրային կարծիքի հարցման համաձայն՝ հարցվածների շուրջ 52 տոկոս մտահոգություն է հայտնել, որ Եվրոպական ուղղվածությամբ արդիականացման գործընթացը կարող է անհամաչափ օգուտ բերել քաղաքականապես կապակցված բիզնես խմբերին և ներսում ձևավորված էլիտաներին՝ լայն հասարակության փոխարեն: Կարևոր է նշել, որ այս անհանգստությունը տարածվում է ընդդիմադիր շրջանակներից շատ ավելի հեռու և արտացոլում է հասարակական ավելի լայն մտահոգություն՝ բարեփոխումների հետ կապված ծախսերի և օգուտների բաշխման

վերաբերյալ: Եվրոպական ինտեգրման հանրային աջակցությունն ինքնին նույնպես ավելի նրբերանգված է, քան երբեմն հուշում են վերնագրերում տեղ գտած թվերը: Հայերի մոտավորապես 75 տոկոսը կողմ է Եվրամիության հետ ավելի սերտ կապերին՝ 2023 թվականի 58 տոկոսի համեմատ, ինչը նշանակալի և էական աճ է: Այնուամենայնիվ, ընդամենը 38 տոկոսն է կարծում, որ կառավարությունը թափանցիկ կերպով է կառավարում ինտեգրման գործընթացը, և կեսից էլ պակասը հայտնում է, որ բավարար տեղեկություն ունի ՀԸԳՀ-ի գործնական հետևանքների վերաբերյալ:⁵

Այս արդյունքները վկայում են, որ եվրոպական ինտեգրման նկատմամբ աջակցությունը լայն է, սակայն հաճախ մակերեսային: Շատ քաղաքացիների համար «Եվրոպան» շարունակում է մնալ բարեկեցության, օրենքի գերակայության և հնարավորությունների խորհրդանիշ, այլ ոչ թե հստակ ընկալված քաղաքական և ինստիտուցիոնալ նախագիծ: Նման աջակցությունը կարող է դառնալ անկայուն, եթե բարեփոխումների հետ կապված ծախսերն ավելի տեսանելի դառնան՝ մինչդեռ շոշափելի օգուտները մնան հեռավոր կամ բավարար չափով չհաղորդակցված: ԱլԳ երկրների կամ Արևմտյան Բալկանների փորձը կարևոր նախադեպեր է տալիս, թե որքան արագ կարող է հանրային ոգևորությունը նվազել, երբ սպասումները գերազանցում են իրական արդյունքները:⁵

Այս արդյունքները վկայում են, որ եվրոպական ինտեգրման նկատմամբ աջակցությունը լայն է, սակայն հաճախ մակերեսային: Շատ քաղաքացիների համար «Եվրոպան» շարունակում է մնալ բարեկեցության, օրենքի գերակայության և հնարավորությունների խորհրդանիշ, այլ ոչ թե հստակ ընկալված քաղաքական և ինստիտուցիոնալ նախագիծ: Նման աջակցությունը կարող է դառնալ անկայուն, եթե բարեփոխումների հետ կապված ծախսերն ավելի տեսանելի դառնան՝ մինչդեռ շոշափելի օգուտները մնան հեռավոր կամ բավարար չափով չհաղորդակցված: ԱլԳ երկրների կամ Արևմտյան Բալկանների փորձը կարևոր նախադեպեր է

⁵<https://www.iri.org/resources/public-opinion-survey-residents-of-armenia-may-2026/>

տալիս, թե որքան արագ կարող է հանրային ոգևորությունը նվազել, երբ սպասումները գերազանցում են իրական արդյունքները:

Սա մատնանշում է Հայաստանի եվրոպական ուղղության առջև ծառացած կարևորագույն ներքին մարտահրավերներից մեկը՝ հասարակության և քաղաքական ընտրախավերի հետ ինտեգրման բնույթի, պահանջների և իրատեսական հեռանկարների վերաբերյալ հաղորդակցության անբավարար ընդգրկումը և որակը: Մինչ օրս կառավարության ուղերձների մեծ մասն ուղղված է եղել դուրս՝ դեպի Բրյուսել, եվրոպական մայրաքաղաքներ և միջազգային լսարան, այլ ոչ թե երկարաժամկետ հեռանկարում բարեփոխումները պահպանելու ունակ կայուն ներքին կոնսենսուսի ձևավորմանը:

Կարճաժամկետ հեռանկարում նման մոտեցումը հասկանալի է: 2025–2026 թվականներին ձեռք բերված դիվանագիտական դիսամիկան պահանջում էր ինտենսիվ ներգրավվածություն եվրոպական գործընկերների և ինստիտուցիոնալ հարթակների հետ: Սակայն ժամանակի ընթացքում այս անհամաչափությունը ձևավորում է կառուցվածքային խոցելիություն: Եվրոպական ուղեգիծը, որը հիմնված է հիմնականում մեկ կառավարության կամ առաջնորդի քաղաքական կամքի վրա, այլ ոչ թե խորապես արմատավորված հասարակական պահանջարկի և լայն քաղաքական կոնսենսուսի, մնում է ներքուստ խոցելի և սահմանափակ կայունությամբ:

Կառավարության ցանկացած փոփոխություն կամ նույնիսկ իշխող կուսակցության խորհրդարանական գերակայության զգալի թուլացումը կարող են էապես դանդաղեցնել, փոփոխել կամ մասամբ հետ շրջել ինտեգրման գործընթացի որոշ բաղադրիչներ: Օրինակ՝ Վրաստանի քաղաքական զարգացումները վերջին տասնամյակում հստակ ցույց են տալիս, թե որքան արագ կարող են նման տեղաշարժեր տեղի ունենալ, երբ ռազմավարական ուղղությունները բավարար չափով ինստիտուցիոնալացված չեն:

Հետևաբար՝ կենտրոնական կետը պետք է հստակորեն ձևակերպվի: Հայաստանի ժամանակակից քաղաքական համատեքստում եվրոպական ինտեգրումը պարզապես քաղաքականության օրակարգ չէ, որը պետք է իրականացվի պետական հաստատությունների կողմից: Դա երկարաժամկետ քաղաքական նախագիծ է, որը պահանջում է հանրային

համաձայնության անընդհատ նորացում և խորացում հասարակության ներսում, հասարակություն, որը բնութագրվում է բազմազան ինքնություններով, մրցակցող աշխարհաքաղաքական նախասիրություններով և տարբեր սոցիալ-տնտեսական շահերով: Այս համատեքստում և՛ Հայաստանի քաղաքական ընտրախավը, և՛ հասարակությունը պետք է առաջնահերթություն տան ոչ միայն Բրյուսելի և ԵՄ անդամ երկրների կառավարությունների, այլ նաև հիմնական ոչ կառավարական կամ քաղաքացիական հասարակության կողմնորոշում ունեցող այն գործիչների հետ անմիջական շփումներին և համագործակցությանը, որոնք փորձում են աջակցել, որ ԵՄ-Հայաստան գործընթացները ավելի լավ ընկալվեն:

Սա ներառում է այն քաղաքացիներին, որոնք դեռևս կասկածամտորեն են վերաբերվում Եվրոպային ավելի խոր ինտեգրվելուն, կառավարության մոտեցումը քննադատող ընդդիմադիր ուժերին, Երևանից դուրս գտնվող համայնքներին, որոնք կարող են ավելի սուր կերպով զգալ համապատասխանեցման ծախսերը, քան մայրաքաղաքը, և այն հաստատություններին, որոնք խոցելի են մնում քաղաքական ազդեցության և վարչական թուլության հանդեպ:

Դիտարկելով այս տեսանկյունից՝ Հայաստանի եվրոպական օրակարգի շուրջ իրական հաղորդակցման պակասը պարզապես երկրորդական տեխնիկական հարց չէ: Այն կառուցվածքային մարտահրավեր է երկրի եվրոպական հետագծի երկարաժամկետ կայունության համար, որը, ի վերջո, կարող է նույնքան Էական լինել, որքան դատաիրավական բարեփոխումների, կառավարման կարողությունների կամ ինստիտուցիոնալ զարգացման թերությունները: Թեև սա կարող է չլինել Հայաստան-ԵՄ հարաբերությունների առջև ծառացած ամենակարևոր խոչընդոտը, սակայն թերևս ամենից ակնհայտ և քաղաքականապես նշանակալի մարտահրավերն է թե՛ Հայաստանի, թե՛ ԵՄ համար, որը հավանաբար կձևավորի Հայաստանի եվրաինտեգրման գործընթացի միջնաժամկետ և երկարաժամկետ ներքին ասպեկտը:

Կառավարում. իրականում կարևոր բարեփոխում

Երբ ոչ թե եվրոպական օրակարգին կողմնորոշված քաղաքականության և ակադեմիական համաժողովների մասնակիցներին, այլ Երևանում և դրանից դուրս առօրյա զրույցների մասնակիցներին հարցնում ենք, թե Նրանք ինչն են կապում Եվրոպայի հետ, պատասխանները հակված են համընկնելու զարմանալիորեն նույնանման սպասումների շուրջ: Նրանք խոսում են դատարանների մասին, որտեղ իրականում դատավարությունից առաջ դատավճիռներ չեն կայացվում, հարկային մարմինների մասին, որոնք, անկախ անձնական կապերից, կիրառում են նույն կանոնները, գնումների համակարգերի մասին, որտեղ համապատասխան որակավորում ունեցող և ամենացածր գին առաջարկողն իսկապես հաղթելու հնարավորություն ունի, ինչպես նաև պետական նշանակումների մասին, որտեղ մասնագիտական կարողություններն ու անձնական բարեվարքությունն ավելի կարևոր են, քան քաղաքական պատկանելությունը, անձնական հավատարմությունը իշխողընտրախավին կամ Նրա հետ մտերմությունը:

Այս սպասումները բացահայտում են մի կարևոր բան: Դրանք աշխարհաքաղաքական նախընտրության վերացական արտահայտություններ չեն: Ավելի շատ դրանք արտացոլում են Հայաստանի գործող կառավարման համակարգի և այն կառավարման համակարգի միջև առկա ինստիտուցիոնալ բացը, որին ձգտում են Նրա քաղաքացիներից շատերը: Այս բացը, թերևս, նաև ներկայացնում է Հայաստանում Եվրոպամետ տրամադրությունների ամենաամուր հիմքը՝ ավելի ամուր, քան աշխարհաքաղաքական ոգևորությունը, որը կարող է տատանվել՝ ի պատասխան տարածաշրջանային ճգնաժամերի, անվտանգության հետ կապված մտահոգությունների կամ փոփոխվող միջազգային հանգամանքների:

Սակայն հենց այն պատճառով, որ կառավարման բարեփոխումները շոշափում են պետության ամենօրյա գործունեությունը, այն մնում է Հայաստանի և Եվրամիության գործընկերության ամենադժվար կողմերից մեկը: Բացը լրացնելը պահանջում է ավելին, քան պարզապես օրենսդրության ընդունում կամ Նոր ինստիտուտների ստեղծում: Այն պահանջում է փոխել հազարավոր պետական պաշտոնյաների և քաղաքական ղեկավարության վարքագիծը, խթանները և մասնագիտական մշակույթը, որոնց գործնական շահերը միշտ չէ, որ

համընկնում են բարեփոխումների փաստաթղթերում և իրավական շրջանակներում ամրագրված սկզբունքների հետ:

Նույնքան կարևոր է գիտակցել, որ «Եվրոպական չափանիշներին համապատասխան» կառավարում ցույց տալու Հայաստանի կառավարության ցանկությունը և ավելի «Եվրոպական» Հայաստան ունենալու հասարակության ձգտումը չեն ենթադրում, որ այս բարեփոխումները պետք է իրականացվեն հենց Եվրոպայի կողմից կամ կարող են հաջողության հասնել միայն եվրոպական աջակցության շնորհիվ: Եվրոպական գործընկերները կարող են տրամադրել փորձագիտություն, ռեսուրսներ և քաղաքական աջակցություն: Այնուամենայնիվ, վերափոխման պատասխանատվությունը, վերջին հաշվով, ընկնում է Հայաստանի հասարակության, նրա քաղաքական և տնտեսական վերնախավի և ընտրված կառավարության վրա:

Կայուն կառավարման բարեփոխումը չի կարող ներմուծվել: Դա պետք է բխի ներքին քաղաքական հանձնառությունից և հանրային պահանջարկից: Սա ճշմարիտ է մնում նույնիսկ թերի ընտրությունների, խիստ բևեռացված քաղաքական մրցակցության կամ բոլոր քաղաքական ուժերի և սոցիալական խմբերի շրջանում իշխող կուսակցության նկատմամբ վստահության պակասի պայմաններում, ինչպես ցույց տվեցին հունիսին կայացած վերջին ընտրությունները: Ժողովրդավարական համակարգերում ինստիտուցիոնալ լեգիտիմությունը բխում է ոչ թե համընդհանուր կոնսենսուսից, այլ ընտրված կառավարությունների կողմից քաղաքական մանդատները արդյունավետ և հաշվետու կառավարման վերածելու կարողությունից:

Միևնույն ժամանակ, Հայաստան-ԵՄ հարաբերությունների վերափոխող ազդեցության վերաբերյալ սպասումները պետք է հիմնված մնան գործընկերությունը սահմանող իրական իրավական և ինստիտուցիոնալ շրջանակների վրա: Սա հատկապես կարևոր է Հայաստանի կառավարման չափանիշների վրա եվրոպական ինտեգրման պոտենցիալ ազդեցության գնահատման ժամանակ: Այս առումով կենտրոնական փաստաթուղթը մնում է ՀԸԳՀ-ը:

Ի՞նչ է ապահովում ՅԸԳՅ-ն և ինչի՞նչի կարող փոխարինել

ՅԸԳՅ-ն տրամադրում է իրավական և ինստիտուցիոնալ ճարտարապետությունը երեսունից ավելի քաղաքականության ոլորտներում կարգավորող դաշտի մոտարկման համար: Եվրոպական հանձնաժողովի 2025-2026 թվականների առաջընթացի գնահատականները բացահայտում են շոշափելի առաջընթացներ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են թվային կառավարումը, պետական կառավարման արդիականացումը և մրցակցային քաղաքականությունը՝ ոլորտներ, որտեղ տնտեսական խթանները հաճախ ամրապնդում են եվրոպական չափանիշներին համապատասխանությունը:⁶

Իրավիճակը զգալիորեն պակաս հուսադրող է այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են դատական իշխանության անկախությունը, կոռուպցիայի դեմ պայքարը և իրավունքի գերակայության ավելի լայն բարեփոխումները: Մշտադիտարկման հաջորդական զեկույցները բազմիցս ընդգծել են այս ոլորտներում առկա մշտական թերությունները՝ չնայած նշանակալի օրենսդրական գործունեությանը:

Սա չպետք է անակնկալ լինի: ՅԸԳՅ-ն Ասոցացման համաձայնագիր չէ: Տարբերությունը միայն տեխնիկական չէ, այլ նաև քաղաքական: Ի տարբերություն 2014 թվականին Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի ստորագրած Ասոցացման համաձայնագրերի՝ ՅԸԳՅ-ն չի ներառում հոր և համապարփակ ազատ առևտրի գոտի, ինչպես նաև չի տրամադրում պաշտոնական անդամակցության հեռանկար: Հետևաբար չունի պայմանականության ամենաուժեղ այն ձևերը, որոնք անդամակցության ավելի հստակ հորիզոն ունեցող երկրներում պատմականորեն խթանել են բարեփոխումների գործընթացները: Թերևս արժե նաև ընդունել, որ անդամակցության պաշտոնական հեռանկարի բացակայությունը պարտադիր չէ, որ խանգարի ԵՄ-ի քաղաքական ազդեցությունը գործադրելուն կամ այլ մեխանիզմներով բարեփոխումները խրախուսելուն:

ՅԸԳՅ-ն առաջարկում է համագործակցության, մերձեցման և աստիճանական մոտեցման շրջանակ, ստեղծում է հնարավորություններ և

⁶https://enlargement.ec.europa.eu/document/download/86d20b92-2709-4f91-ba66-86c5d6212ab4_en

խթաններ, բայց չի կարող պարտադրել վերափոխում: Հետևաբար, հայ քաղաքականությունն մշակողները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և միջազգային գործընկերները պետք է համապատասխանաբար ճշգրտեն իրենց սպասելիքները: Համաձայնագիրը կարող է նպաստել բարեփոխումներին, բայց չի կարող փոխարինել ներքին քաղաքական կամքին:

Բարեփոխումներին ցուցաբերվող դիմադրության քաղաքական տնտեսությունը

Հայաստանում կառավարման բարեփոխումների իրատեսական քննարկումը պահանջում է մի տիպի իրականություն ընդունել. դատական իշխանության անկախության և հակակոռուպցիոն բարեփոխումների հիմնական խոչընդոտները քաղաքական են և մասամբ՝ մշակութային, բայց ոչ տեխնիկական:

Խնդիրը փորձագիտության պակասը չէ: Տարիներ շարունակ քննարկվող բազմաթիվ բարեփոխումներ իրականացնելու համար Հայաստանն բավարար մասնագիտական գիտելիքներ, միջազգային աջակցություն և ինստիտուցիոնալ փորձ ունի: Ավելի բարդ է խթանների և շահերի հարցը:

Ինչպես կարող ենք տեսնել նաև ԵՄ բազմաթիվ այլ գործընկերներն են, երբեմն դատավորները, որոնց կարիերան պատմականորեն կախված է եղել քաղաքական ազդեցության ոչ ֆորմալ ցանցերից, քիչ պատճառներ ունեն ողջունելու այդ ցանցերը թուլացնող բարեփոխումները: Հայեցողական որոշումների կայացմանը սովոր պետական պաշտոնյաները կարող են ավելի մեծ թափանցիկությունը ընկալել ավելի շուտ որպես սպառնալիք, քան՝ հնարավորություն: Պետական կառույցների արտոնյալ հասանելիությունից օգտվող տնտեսական գործիչները հավանաբար չեն աջակցի մրցակցությունն ու հաշվետվողականությունը բարձրացնող փոփոխություններին:

Անկախ այն բանից՝ լիովին հիմնավորված են, թե ոչ, նման ընկալումները քաղաքական նշանակություն ունեն: Ինչպես արդեն նշվել է, նմանատիպ օրինաչափություններ դիտվել են ԱլԳ գրեթե բոլոր երկրներում: Դրանց պատճառած վնասը բխում է ոչ միայն օրենքի առջև անհավասար վերաբերմունքի հնարավորությունից, այլև հանրության

վատահոլության վրա ունեցած իրենց ազդեցությունից: Ընդհանուր առմամբ քաղաքացիները պատրաստ են հանդուրժելու դանդաղ ընթացող բարեփոխումները և ավելի պակաս պատրաստակամ են հանդուրժելու երկակի չափորոշիչների դրսևորումները:

Եվրաինտեգրումն ինքնին չի հանգեցնում կառավարման որակի բարելավման: Լավագույն դեպքում այն ձևավորում է արտաքին շրջանակ, որի պայմաններում լավ կառավարման գաղափարի պաշտպանությունն ավելի դյուրին է, իսկ դրա դեմ բացահայտ հանդես գալը՝ ավելի դժվար: Թե որքանով այս շրջանակը կհանգեցնի շոշափելի բարելավումների, մեծապես կախված է ներքաղաքական պայմաններից՝ քաղաքացիական հասարակության ուժից, լրատվամիջոցների անկախությունից, պետական ինստիտուտների արհեստավարժությունից, գործող իշխանություններին նույն չափանիշներով գնահատելու պատրաստակամությունից, որոնցով գնահատվել են նախորդ կառավարությունները, ինչպես նաև թե՛ կառավարման բարեփոխումների, թե՛ Հայաստան-ԵՄ հարաբերությունների ավելի լայն համատեքստի վերաբերյալ ռազմավարական հաղորդակցության արդյունավետությունից:

2026 թվականի խորհրդարանական ընտրությունների արդյունքը նորացված քաղաքական մանդատ է տալիս իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը: Սա տալիս է և՛ հնարավորություն, և՛ պատասխանատվություն: Կառավարությունն այժմ կանգնած է մարտահրավերի առջև՝ ցույց տալու, որ Հայաստանի եվրաինտեգրման օրակարգն իսկապես արտացոլում է եվրոպական չափանիշները գործնականում, ոչ թե պարզապես հռետորաբանությամբ:

Դա չանելը քննադատներին ավելի ու ավելի հավաստի հիմքեր կտա պնդելու, որ ինտեգրման գործընթացի և եվրոպական չափորոշիչներին մոտարկման տարրերն իրականացվում են կանոնների ընտրովի կիրառման և քաղաքական երկակի չափորոշիչների միջոցով՝ մասնավորապես հանրային կառավարման և ինստիտուցիոնալ բարեփոխումների զգայուն ոլորտում:

«Քաղաքացիական պայմանագրի» ընտրական հաղթանակից անմիջապես հետո ընկած ժամանակահատվածը կարող է լինել այս մտահոգություններին անդրադառնալու ամենահարմար պահերից մեկը: Ալֆ մի քանի երկրների փորձը ցույց է տալիս, որ ընտրական

լեգիտիմություն վայելող կառավարությունները հաճախ ավելի մեծ քաղաքական տարածք ունեն քննադատությունն ընդունելու, դժվարին բարեփոխումներ ձեռնարկելու և այլախոհ ձայների հետ կառուցողականորեն շփվելու համար: Այն, թե Հայաստանի քաղաքական ղեկավարությունը կնախընտրի արդյո՞ք օգտագործել այս հնարավորությունների պատուհանը, կարող է դառնալ երկրի եվրոպական հետագծի արժանահավատության և կայունության ամենակարևոր որոշիչ գործոններից մեկը առաջիկա տարիներին:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ – ԲԱԺԻՆ 3

Կառավարում: Հնարավորություններ և սահմանափակումներ •

ՀԸԳՀ ոլորտի առաջընթաց ԵՅ ՀԸԳՀ առաջընթացի գլեկույց 2026: Freedom House-ի երկրները անցումային փուլում 2026; TI CPI 2025; ICG Armenia 2025

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ▶ ՀԸԳՀ-ը ապահովում է մոտարկման ճարտարապետություն 30+ ոլորտներում: ԵՄ TAIEX և ԹՎԽԻՆԿ ծրագրերը լրացնում են ինստիտուցիոնալ կարողությունների բացերը, որոնք Հայաստանի Հանրապետությունը չի կարող լուծել ներքին մակարդակով:
- ▶ 2018 թվականից հետո կառավարման բարելավման հասարակական պահանջարկը իրական է և քաղաքականապես կայուն: Այն շարունակվում է Նույնիսկ այն դեպքում, երբ կուտակվում են ներդրման տեմպի հետ կապված հիասթափությունները:
- ▶ ԵՄ պայմանականությունը, Նույնիսկ անդամակցության հորիզոն չունենալով, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին տալիս է օրինական արտաքին չափանիշ՝ կառավարություններին հանրային մակարդակով հաշվետու պահելու համար:
- ▶ Թվային կառավարման և մրցակցային իրավունքի առաջընթացները իրական են և փաստաթղթավորված՝ ինստիտուցիոնալ նախադեպ և փորձ ստեղծելով ավելի դժվար բարեփոխումների համար:
- ▶ Կոռուպցիայի դեմ պայքարի չափորոշիչը կապում է ԵՄ ֆինանսական աջակցությունը կատարողականի հետ՝ ստեղծելով արտաքին հաշվետվողականության ճնշում, որը քաղաքացիական հասարակությունը կարող է ուժեղացնել հանրային մոնիթորինգի միջոցով:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

- ▶ ՀԸԳՀ-ը չունի անդամակցության հեռանկար՝ այն հատկանիշը, որը պատմականորեն ամենաարդյունավետ կերպով պահպանել է բարեփոխումների թափը: Հայաստանի բարեփոխումների խթանման կառուցվածքը համապատասխանաբար ավելի թույլ է:
- ▶ Հակակոռուպցիոն միջոցառումների ընտրովի կիրառումը վնասում է բարեփոխումների հեղինակությանը: Նախորդների հետ կապված գործիչների դեմ գործերը առաջ են շարժվում, իսկ կոալիցիոն գործիչների դեմ գործերը դանդաղ են ընթանում:
- ▶ Դատական անկախությունը՝ 2.75 միավորով (Freedom House 2026), կառավարման ամենաթույլ միակ ցուցանիշն է: Օրենսդրական բարեփոխումները գերազանցել են ինստիտուցիոնալ վարքային փոփոխությունները:
- ▶ Հաղորդակցության դեֆիցիտ. ԵՄ ինտեգրացիան Բոյուսելին ներկայացվում է ավելի համակարգված, քան բացատրվում է հայ քաղաքացիներին: 44 տոկոսը նշում է անբավարար տեղեկատվության մասին (IRI 2026):
- ▶ Բարեփոխումների թափը կապված է մեկ քաղաքական կոալիցիայի հետ, այլ ոչ թե կառավարության փոփոխությունից հետո գոյատևելու ունակ անկախ ինստիտուտների հետ:

Անվտանգություն. անկեղծ գնահատական, թե ինչ կարող է և ինչ չի կարող անել ԵՄ-ն

Հայաստանի բաղաբական ղեկավարության ներսում անվտանգության հայեցակարգը վերջին տասնամյակի ընթացքում խոր փոխակերպման է ենթարկվել: Նախորդ տարիներին Հայաստանի անվտանգության բաղաբականության մեջ գերիշխում էր ռազմական կողմնորոշման մոդելը, որը նպատակ ուներ պահպանելու Ադրբեջանի հետ տարածաշրջանային ուժերի հավասարակշռությունը: Մինչև 2020-2023 թվականների իրադարձությունները՝ Հայաստանի անվտանգության բաղաբականությունը հիմնականում ընկալվում էր ավանդական զսպման, ուժերի դիրքորոշման և տարածաշրջանային ռազմատեխնիկական մրցակցության պրիզմայով:

Այսօր սակայն, այդ ընկալումը փոփոխվում է: Մինչդեռ ավանդական ռազմական սպառնալիքները մնում են արդիական, Հայաստանի բաղաբական ղեկավարությունը գնալով ավելի լայն տեսանկյունից է դիտարկում անվտանգությունը, որը ներառում է հիբրիդային, ոչ կինետիկ և ինստիտուցիոնալ սպառնալիքների նկատմամբ դիմակայունությունը: Վերջին մի քանի տարիների ընթացքում Հայաստանի անվտանգության վերաբերյալ դիսկուրսը ենթարկվել է աստիճանական, բայց նշանակալի փոխակերպման: Այդուհանդերձ, ավանդական ռազմական սպառնալիքները մնում են ազգային անվտանգության պլանավորման կարևոր բաղադրիչ, բաղաբականության մշակողները անվտանգությունը ավելի ու ավելի լայն շրջանակի մեջ են դնում, որոնք ներառում են հիբրիդային սպառնալիքների նկատմամբ դիմակայունությունը: Այս մարտահրավերներից շատերն ի հայտ են գալիս ոչ թե մարտադաշտում, այլ ներքին ոլորտում՝ ապատեղեկատվական արշավներ, կիբերխոցելիություններ, արտաքին բաղաբական ազդեցություն, տնտեսական հարկադրանք, ինստիտուցիոնալ ներթափանցում և սոցիալական ու բաղաբական բաժանումները շահագործելու փորձեր:

2025 թվականի օգոստոսին Վաշինգտոնի համաձայնագրերի ստորագրումը և դրան հաջորդած Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության պայմանագրի նախաստորագրումը զգալիորեն նվազեցրին լայնածավալ ռազմական սպառնալիքների անմիջական ընկալումը: Սա չի նշանակում, որ անվտանգության հետ կապված մտահոգությունները վերացել են: Հայ հասարակության զգալի հատվածները շարունակում են Ադրբեջանը դիտարկել որպես կոշտ անվտանգության հետ կապված

պոտենցիալ ռիսկերի հիմնական աղբյուր: Հանրային ընկալումները հաճախ ավելի դանդաղ են զարգանում, քան դիվանագիտական իրականությունը, և վերջին հակամարտությունների ժառանգությունը շարունակում է մնալ հզոր գործոն Հայաստանի ներքաղաքական բանավեճում:

Այս համատեքստում Հայաստան-ԵՄ հարաբերությունների անվտանգության ասպեկտը պահանջում է հատկապես ուշադիր վերլուծություն: Անվտանգությունը, հավանաբար, այն ոլորտն է, որտեղ հայկական սպասումների և եվրոպական ինստիտուցիոնալ իրականության միջև եղած անջրպետը մնում է ամենամեծը: Սա նաև այն ոլորտն է, որտեղ թյուրըմբռնումները կարող են առաջացնել ամենալուրջ քաղաքական հետևանքները:

Հայաստան-ԵՄ հարաբերությունների անվտանգության ասպեկտի ցանկացած գնահատում պետք է սկսվի ԵՄ ինստիտուցիոնալ սահմանափակումների հստակ ճանաչումից: Ի տարբերություն ՆԱՏՕ-ի կամ Նույնիսկ ՀԱՊԿ-ի՝ ԵՄ-ն կոլեկտիվ պաշտպանության կազմակերպություն չէ (թեև տեսնում ենք, որ 42 (7) հոդվածի կիրառելիության վերաբերյալ ԵՄ ներքին քննարկումների ակտիվացումը աստիճանաբար ավելի արդիական հարց է դառնում անդամ երկրների համար) և չի տրամադրում անվտանգության երաշխիքներ, որոնք համեմատելի են ռազմական դաշինքներում ներառված երաշխիքների հետ: Այս տարբերակման ըմբռնումը կարևոր է եվրոպական ներգրավվածության շրջանակի և սահմանների վերաբերյալ իրատեսական սպասումներ զարգացնելու համար: ԵՄ-ն զինված հակամարտության դեպքում Հայաստանի անունից ռազմական ուժեր չի տեղակայի: Սա քաղաքական կամքի հարց չէ, այլ ԵՄ ինստիտուցիոնալ բնույթի և իրավական ճարտարապետության հետևանք է:

Տարբեր պահերին թե՛ Հայաստանի կառավարության ներկայացուցիչները, թե՛ ընդդիմադիր գործիչները նպաստել են հանրային ընկալումների ձևավորմանը, որոնք մշուշում են այս տարբերությունը: Եվրոպական ավելի սերտ ինտեգրման որոշ կողմնակիցներ երբեմն ԵՄ ներգրավվածությունը ներկայացրել են որպես անվտանգության հովանոցի մի ձև, որը Բրյուսելը ղեկավարում է, ինչպես իրավաբանորեն ի վիճակի է ապահովել: Մյուս կողմից՝ որոշ քննադատներ այս սահմանափակումները որպես ապացույց են մատնանշել, որ Հայաստանը պետք է վերադառնա

Ռուսաստանի վրա կենտրոնացած նախկին անվտանգության կարգավորումներին, հաճախ անտեսելով այդ կարգավորումների 2020-2023 թվականների ճգնաժամի ընթացքում դրսևորված թերությունները:

Երկու մեկնաբանություններն էլ չեն արտացոլում իրականությունը: Քաղաքական աջակցության, ինստիտուցիոնալ համագործակցության և պաշտոնական անվտանգության երաշխիքների միջև հստակ տարբերակումը պահպանելը կարևոր է մնում Հայաստանի անվտանգության ապագայի և Հայաստան-ԵՄ ինտեգրման օրակարգի վերաբերյալ ցանկացած լուրջ քննարկման համար:

Սա չի նվազեցնում Հայաստանի անվտանգության ոլորտում աճող ԵՄ դերի նշանակությունը: 2023 թվականին Հայաստանում ԵՄ առաքելության տեղակայումը հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով երբեք նախատեսված չէր որպես կոշտ անվտանգության երաշխիք, և ոչ էլ ներկայացնում էր Հայաստանի նկատմամբ պաշտոնական անվտանգության պարտավորությունների կատարում: Ավելին՝ նման պարտավորություններ գոյություն չունեին: ՀԵՄԱ-ն գործում էր որպես քաղաքական զսպման մեխանիզմ, որը մեծացնում էր միջազգային տեսանկյունից հայ-ադրբեջանական սահմանին և բարձրացնում էր հնարավոր սրացնող գործողությունների հետ կապված քաղաքական ծախսերը:

Այնուամենայնիվ, ժամկետները կարևոր են միջազգային քաղաքականության մեջ: ՀԵՄԱ-ն տեղակայվել է, թերևս, Երկրորդ Ղարաբաղյան պատերազմից հետո Հայաստանի համար ամենանվտանգավոր ժամանակահատվածում, իսկ մինչև 2025 թվականի օգոստոսին Վաշինգտոնի համաձայնագրերի ստորագրումը՝ ռազմական Եսկալացիայի վերսկսման հնարավորության վերաբերյալ մտահոգությունները լայնորեն տարածված էին թե՛ Հայաստանում, թե՛ միջազգային դիտորդների շրջանում: Այդ համատեքստում առաքելության ներկայությունը կարևոր կայունացնող դեր խաղաց՝ նույնիսկ եթե դրա ազդեցությունը չպետք է գերազնահատել:

ՀԵՄԱ-ի ամենակարևոր կողմերից մեկը եղել է դրա ներդրումը միջազգային թափանցիկությանը և արտաքին դերակատարների կողմից ավելի մեծ ուշադրության ձևավորմանը նպաստելը: Սահմանի երկայնքով իր շարունակական ներկայության միջոցով առաքելությունը նպաստել է

տեղում զարգացումների անկախ գրանցամատյան ստեղծելուն՝ նվազեցնելով մրցակցային պատմությունների շրջանակը և բարձրացնելով միջադեպերի տեսանելիությունը եվրոպացի քաղաքականություն մշակողների համար: 2026 թվականի սկզբին ՀԵՄԱ-ն հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով անցկացրել էր ավելի քան 4200 պարեկային օր՝ ստեղծելով կայուն միջազգային մոնիթորինգային ներկայություն, որն աննախադեպ էր Հայաստանի և Եվրամիության հարաբերությունների պատմության մեջ:

Ավելի լայն իմաստով ՀԵՄԱ-ն պարզապես սահմանային դիտորդական առաքելություն չէ: Դրա տեղակայումը ցույց տվեց ԵՄ պատրաստակամությունը՝ ստանձնելու ավելի անմիջական և տեսանելի դեր Հարավային Կովկասի անվտանգության հարցերում: Այն փաստը, որ նման առաքելություն գործում է մի երկրում, որը ԵՄ անդամության թեկնածու չէ, իսկ Հայաստանի տարածքում շարունակում է գործել ռուսական ռազմակայան, իսկ ռուս սահմանապահները դեռևս մասնակցում են Իրանի և Թուրքիայի հետ սահմանների պահպանությանը, արտացոլում է այն խորքային փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել Հայաստանի արտաքին և անվտանգության քաղաքական միջավայրում:

Գրեթե նույնքան կարևոր զարգացում տեղի ունեցավ 2026 թվականի ապրիլին, երբ ԵՄ-ն Հայաստանում ստեղծեց ԵՄԳԱ-ն: Եթե ՀԵՄԱ-ն հիմնականում կենտրոնացած է սահմանային դիտարկման և վստահության ամրապնդման վրա՝ տեղակայված ԵՄ ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության (CSDP) շրջանակում, ապա ԵՄԳԱ-ի նպատակ ունի լուծել սկզբունքորեն այլ մարտահրավերների շարք: Դրա մանդատը ուղղված է Հայաստանի դիմակայունության ամրապնդմանը հիբրիդային սպառնալիքների նկատմամբ, ինչպես նաև հայկական հաստատությունների կարողությունների զարգացմանը՝ բարդ անվտանգության մարտահրավերները կառավարելու համար այն մակարդակում, որը գտնվում է սովորական ռազմական հակամարտության շեմից ցածր: Այս գործունեությունը ներառում է ռազմավարական խորհրդատվություն, կարողությունների զարգացում, ճգնաժամային կառավարման պլանավորում, միջգերատեսչական համակարգման բարելավում և համապարփակ դիմակայունության մեխանիզմների ձևավորման աջակցություն:

ԵՄ խոշոր անդամ պետությունների տրամադրած երկկողմ ռազմական աջակցության հետ համեմատած՝ այս ցուցանիշները համեմատաբար համեստ են: Սակայն դրանց նշանակությունը չի կարող գնահատվել միայն ֆինանսական չափանիշներով: ԵԽՀ-ի միջոցառումները ներկայացնում են Հայաստան–ԵՄ հարաբերություններում պաշտպանության ոլորտում առաջին ինստիտուցիոնալացված աջակցության շրջանակը: Դրանք նաև ցույց են տալիս անվտանգության ոլորտում գործնական ներգրավվածության այնպիսի մակարդակ, որը մինչ վերջերս ավելի բնորոշ էր ԵՄ թեկնածու երկրներին կամ ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի գործընկեր պետություններին, քան ԱԳ շրջանակի պետություններին:

Նույնքան կարևոր են համագործակցության ի հայտ եկող ոլորտները, որոնք կենտրոնացած են հիբրիդային սպառնալիքների, կիբերանվտանգության, ճգնաժամերի կառավարման, ռազմավարական հաղորդակցությունների, կարևորագույն ենթակառուցվածքների պաշտպանության և ինստիտուցիոնալ դիմադրողականության վրա: Իրոք, ԵՄ ամենաերկարատև ներդրումը Հայաստանի անվտանգության համար ոչ թե զսպող կամ պաշտպանական օգնության գործիք լինելն է, այլ դիմակայունություն կառուցելու միջոց լինելը:

Անկախ դատարաններով, պրոֆեսիոնալ պետական ինստիտուտներով, բազմազան տնտեսական և էներգետիկ գործընկերություններով, անկախ լրատվամիջոցներով, միջազգային ոչ պետական և քաղաքացիական հասարակության գործիչների բաց և արդյունավետ ներգրավվածությամբ, ինչպես նաև ժողովրդավարական ինստիտուտների նկատմամբ հանրային ավելի մեծ վստահությամբ Հայաստանն իր բնույթով ավելի անվտանգ է, քան միայն պաշտոնական անվտանգության երաշխիքներից կախված Հայաստանը, որոնք կարող են պահպանվել կամ չպահպանվել ճգնաժամի ժամանակ: Այս տեսանկյունից անվտանգային համագործակցությունն ու կառավարման բարեփոխումները չպետք է դիտարկվեն որպես միմյանցից տարանջատ գործընթացներ: Այս գործընթացները չափազանց փոխկապակցված են:

2026 թվականի դրությամբ Հայաստանի համագործակցությունը ԵՄ հետ անվտանգության ոլորտում՝ ներառյալ ՀԵՄԱ-ն, ՀԳԱՄ-ն և ԵԽՀ-ի աջակցության միջոցառումները, հիբրիդային սպառնալիքների դեմ դիմակայունության ծրագրերը, ճգնաժամային կառավարման

Նախաձեռնությունները և մի շարք ԵՄ անդամ պետությունների հետ աճող երկկողմ պաշտպանական համագործակցությունը, հասել է ներգրավվածության այնպիսի մակարդակի, որը մեկ տասնամյակ առաջ ավելի բնորոշ կլիներ ԵՄ թեկնածու երկրներին կամ ՆԱՏՕ-ի գործընկեր պետություններին:

Առաջ նայելով՝ Հայաստան-ԵՄ անվտանգության ոլորտում համագործակցության ամենախոստումնալից ոլորտներից մի քանիսը կարող են ի հայտ գալ ավանդական պաշտպանության ոլորտից դուրս: Հայաստանի իրավապահ մարմինների և Եվրոպոլի միջև ընդլայնված համագործակցությունը, սահմանների կառավարման հարցերում Frontex-ի հետ ավելի խոր համագործակցությունը, կազմակերպված հանցագործության դեմ պայքարի, կիբեռհանցագործությունների հետաքննությունների, ահաբեկչության դեմ պայքարի համակարգման, փողերի լվացման դեմ պայքարի մեխանիզմների, մաքսային համակարգի արդիականացման և դատական ոլորտներում՝ այս ամենը հնարավորություններ է ընձեռում գործնական և փոխշահավետ համագործակցության համար:

Համագործակցության այս ձևերը կարող են ավելի քիչ հանրային ուշադրություն գրավել, քան ռազմական հարցերը, սակայն դրանց երկարաժամկետ ազդեցությունը Հայաստանի անվտանգության ճարտարապետության վրա կարող է նույնպես նշանակալի լինել: Եվրոպական շատ պետություններում ոստիկանության, սահմանային կառավարման, հետախուզական համակարգման և ճգնաժամային արձագանքման արդյունավետությունն ավելի անմիջականորեն է նպաստում առօրյա անվտանգությանը, քան ավանդական ռազմական կարողությունները:

Վերջին հաշվով, Եվրամիությունը չի կարող Հայաստանին տրամադրել այն, ինչ ապահովում են ռազմական դաշինքները: Սակայն դա այն դերը չէ, որը այն ձգտում է խաղալ: ԵՄ-ի համեմատական առավելությունը այլ հարթությունում է՝ ամրապնդել ինստիտուցիոնալ դիմակայունությունը, նվազեցնել հիբրիդային սպառնալիքների նկատմամբ խոցելիությունը, աջակցել ժողովրդավարական կառավարմանը, բարձրացնել պետական կարողությունները և նպաստել այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնց դեպքում անվտանգությունը կդառնա

կայուն, այլ ոչ թե պարզապես ռեակտիվ:

Հայաստանի համար այս տարբերակման հստակ ըմբռնումը և համապատասխանաբար քաղաքականության մշակումը կարող են դառնալ առաջիկա տարիներին իրատեսական, հասուն և արդյունավետ եվրոպական անվտանգության գործընկերության զարգացման ամենակարևոր նախադրյալներից մեկը: Նման մոտեցումը, վերջին հաշվով, կարող է ավելի արժեքավոր լինել, քան անիրատեսական սպասումներ ունենալ անվտանգության երաշխիքների վերաբերյալ, որոնք եվրամիությունը երբեք չէր նախատեսել ապահովել:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ – ԲԱԺԻՆ 4

Անվտանգության ասպեկտ. հնարավորություններ և սահմանափակումներ

ՀԵՄԱ գործողություններ 2026; EPF որոշում 2023; ՀԳԱՄ տեղակայում 2026

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ▶ ՀԵՄԱ-ի ավելի քան 4200 պարեկային օրերը ստեղծում են միջադեպերի փաստաթղթավորված գրանցամատյան և բարձրացնում հակամարտության ցածր մակարդակի սրման քաղաքական արժեքը, ինչը չափելի քաղաքական զսպման ազդեցություն է իր քաղաքացիական մանդատի շրջանակներում:
- ▶ Հիբրիդային սպառնալիքների վերաբերյալ խորհրդատվական առաքելությունը (EUPMA) անդրադառնում է իրական սպառնալիքի ամենահավանական վեկտորին՝ ինստիտուցիոնալ խափանում, ապատեղեկատվություն, ընտրական միջամտություն: ԵՄ փորձագիտությունը ուղղակիորեն կիրառելի է:
- ▶ Եվրոպական խաղաղության հիմնադրամը (10,85 միլիոն եվրո) հնարավորություն է տալիս զարգացնելու կարողությունները՝ առանց ՆԱՏՕ-ի անդամակցության կամ պաշտոնական թեկնածության պահանջների:
- ▶ ԵՄ-ի ինստիտուցիոնալ մտահոգությունը Հայաստանում կայունության համար ենթադրում է անկայունացման իրական քաղաքական ծախսեր, նույնիսկ եթե դրանք ռազմական բնույթի չեն:
- ▶ ՀԵՄԱ-ի հանրային հաշվետվությունները ձևավորում են միջազգային վավերագրական արխիվ, որը վերաբերում է Հայաստանի դիվանագիտական դիրքորոշմանը՝ ապագա անվտանգության ցանկացած ճգնաժամի դեպքում:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

- ▶ ԵՄ-ն դեռևս չի կարողանում ապահովել արդյունավետ կոլեկտիվ պաշտպանություն. և՛ կառավարությունը, և՛ քաղաքացիական հասարակությունը պատասխանատվություն են կրում այս մասին անկեղծորեն տեղեկացնելու համար:
- ▶ ՀԵՄԱ-ն քաղաքացիական և զուտ վերահսկողական գործակալություն է. այն չի կարող կանխել ռազմական գործողությունները և չունի դա անելու լիազորություն:
- ▶ ՀԵՄԱ-ի երկարաձգման համար խորհրդի կոնսենսուսի պահանջը կառուցվածքային խոցելիություն է. արտաքին ճնշման տակ գտնվող մեկ անդամ պետություն կարող է խոչընդոտել շարունակմանը:
- ▶ Անվտանգության վերաբերյալ չափազանցված սպասումները, որոնք առկա են կառավարության հաղորդակցության մեջ և որոշ եվրոպականամետ քաղաքացիական հասարակության քննարկումներում, ստեղծում են հեղինակության ծուղակ, երբ իրականությունը վատանում է:
- ▶ Ռուսաստանի, Թուրքիայի և Հարավային Կովկասի առաջնահերթությունների վերաբերյալ ԵՄ անդամ պետությունների տարաձայնությունները իրական են. գործընկերության անվտանգության ասպեկտը կախված է 27 կառավարությունների քաղաքական կամքի կոալիցիայից, որը երաշխավորված չէ:

Տնտեսություն. իրական հնարավորություններ և իրական ծախսեր

Հայաստանի վերջին մակրոտնտեսական ցուցանիշները ներկայացնում են մի պատկեր, որն առաջին հայացքից ավելի կայուն է, քան այն, ինչ կարող են հիմնավորել հիմքում ընկած կառուցվածքային պայմանները: 2023 թվականին 8,7 տոկոս և 2024 թվականին 5,9 տոկոս անսովոր բարձր աճից հետո, որը մեծ մասամբ պայմանավորված էր վերարտահանմամբ, կապիտալի ներհոսքով և Ռուսաստան-Ուկրաինա պատերազմի ու դրան հաջորդած արևմտյան պատժամիջոցների հետ կապված բիզնեսի տեղափոխմամբ, տնտեսական աճը կանխատեսումների համաձայն կչափավորվի դեպի ավելի կայուն միջնաժամկետ հետագիծ՝ մոտ 5,2 տոկոս 2025 թվականին և 4,7-5,0 տոկոս հաջորդ տարիներին, քանի որ այս ժամանակավոր արտաքին շարժիչ ուժերը շարունակում են թուլացնել իրենց ազդեցությունը:⁷

Սակայն Հայաստանի տնտեսությունը նաև մեծապես կախված է Ռուսաստանի նկատմամբ Արևմուտքի պատժամիջոցներից հետո ժամանակավոր տեղափոխման ազդեցությունից: Ռուսական ընկերությունների, կապիտալի և որակավորված աշխատուժի ներհոսքը խթանել է ծառայությունների, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների և անշարժ գույքի ոլորտները, սակայն այս աճի զգալի մասը ունի ցիկլային, այլ ոչ թե կառուցվածքային բնույթ: Արժույթի միջազգային հիմնադրամը բազմիցս զգուշացրել է, որ այս «տեղափոխման դիվիդենդի»՝ ներկայիս մակարդակներում պահպանվելը քիչ հավանական է, և Հայաստանին անհրաժեշտ կլինի արմատապես այլ աճի մոդել, երբ այս ազդեցությունները նորմալանան:

Սա ԵՄ տնտեսական ներգրավվածության հարցը դարձնում է ավելի քիչ վերացական, քան կարող է թվալ: Սա պարզապես աշխարհաբաղաձաքական կողմնորոշման հարց չէ. հարց է, թե արդյոք Հայաստանը կարող է կարճաժամկետ, արտաքին ազդեցությամբ պայմանավորված աճը փոխարինել ինստիտուցիոնալ գործոնների, առևտրային ինտեգրման և ներդրումային հոսքերի վրա հիմնված

⁷<https://www.worldbank.org/en/country/armenia/publication/armenia-economic-pulse-fairer-markets-for-inclusive-growth>

երկարաժամկետ արտադրողականության աճով:

Այս անցման ամենաակնառու դրսևորումներից մեկն արդեն տեսանելի է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում: Մոտավորապես ՀՆԱ-ի 5–6%-ը կազմող և տարեկան 20%-ից ավելի աճ գրանցող Հայաստանի տեխնոլոգիական արդյունաբերությունն արդեն մասամբ ինտեգրված է եվրոպական և համաշխարհային արժեքային շղթաներին: Հայկական ՏՏ ընկերությունների զգալի մասը գործում է ԵՄ-ի հետ համադրելի ստանդարտների շրջանակում, իսկ այնպիսի կարգավորումների հետ հետագա համադրեցումը, ինչպիսին է ԵՄ տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգը (GDPR), Էականորեն կընդլայնի հասանելիությունը եվրոպական կորպորատիվ հաճախորդներին՝ հատկապես աութսորսինգի ծառայությունների, ֆինթեքի և տվյալների վրա հիմնված արդյունաբերությունների ոլորտներում: Գործնականում կարգավորումների մերձեցումը աստիճանաբար դառնում է շուկայի հասանելիության նախապայման՝ այլևս ոչ թե զուտ իրավական գործընթաց:

Միևնույն ժամանակ, Հայաստանի տնտեսական կառուցվածքը սահմանափակված է ԵԱՏՄ անդամակցությամբ, ինչպես նաև երկկողմ առևտրում Ռուսաստանի շուկայի նկատմամբ ունեցած զգալի կախվածությամբ: Այս շրջանակը սահմանափակում է երկրի ինքնուրույնությունը արտաքին մաքսատուրքերի սահմանման, անկախ առևտրային համաձայնագրերի բանակցման և ԵՄ կարգավորիչ ստանդարտներին լիարժեք համադրման հարցերում այն ոլորտներում, որտեղ ԵԱՏՄ կանոնները տարբերվում են: Կառուցվածքային առումով Հայաստանը չի կարող միաժամանակ մասնակցել ԵՄ-ի խոր ազատ առևտրի շրջանակներին կամ համաձայնագրերին՝ պահպանելով ԵԱՏՄ մաքսային ռեժիմի անդամակցությունը: Սա քաղաքական փաստարկ չէ, այլ իրավական-ինստիտուցիոնալ սահմանափակում, որը բխում է հենց ԵՄ ինստիտուցիոնալ ճարտարապետությունից:

Այս սահմանափակումները սրվում են Ռուսաստանի շարունակական ազդեցությամբ Հայաստանի տնտեսության հիմնական ոլորտներում: Էներգետիկ կախվածությունը մնում է զգալի, քանի որ ռուսական գազը մնում է Հայաստանի էներգետիկ հաշվեկշռի կենտրոնական բաղադրիչը: ԵԱՏՄ-ի ներսում առևտրային հոսքերը շարունակում են կարևոր լինել

գյուղատնտեսական արտադրողների և փոքր արդյունաբերական արտահանողների համար: Բացի դրանից՝ աշխատանքային միգրացիան շարունակում է կայունացնող դեր խաղալ տնային տնտեսությունների եկամուտների ձևավորման մեջ, ընդ որում՝ դրամական փոխանցումները բազմաթիվ մարզային համայնքներում դեռևս եկամտի զգալի բաժին են: Այս կապերը ձևավորում են կառուցվածքային կախվածություններ, որոնք հնարավոր չէ անտեսել տնտեսական վերակողմնորոշման վերաբերյալ որևէ իրատեսական քննարկման ընթացքում:

Հետևաբար, այս շրջանակի փոփոխման ծախսերը պետք է հստակ ձևակերպվեն: ԵԱՏՄ-ից արագ կամ չկառավարվող հեռացումը, ամենայն հավանականությամբ, կհանգեցնի ցնցումների էներգակիրների գնագոյացման, արտահանման հասանելիության և տնային տնտեսությունների եկամուտների վրա՝ հատկապես Երևանից դուրս գտնվող շրջաններում: Սա դիվերսիֆիկացիայի դեմ փաստարկ չէ, այլ ավելի շուտ վկայում է, որ անհրաժեշտ է խուսափել նման քայլի հաջորդականության և ադապտացիոն ծախսերի վերաբերյալ ռազմավարական ինքնախաբեությունից:

Հայաստան-Ռուսաստան-ԵԱՏՄ հարաբերություններում վերջին զարգացումները Էլ ավելի են ընդգծել այս կառուցվածքային լարվածությունը: 2026 թվականի խորհրդարանական ընտրություններին և Երևանի եվրոպական գազաթնաժողովներին նախորդող և հաջորդող ժամանակահատվածում Մոսկվան մեծացրել է քաղաքական և տնտեսական ազդանշանային ճնշումը: Առևտրային վեճերի, հայկական արտահանմանը ազդող վարչական խոչընդոտների և ԵԱՏՄ կառույցներում հայկական ապրանքների նկատմամբ վերահսկողության ուժեղացման մասին հաղորդագրությունները Երևանում լայնորեն մեկնաբանվեցին որպես տնտեսական հարկադրանքի տարրեր: Քաղաքական մակարդակում ԵԱՏՄ բարձրաստիճան ներկայացուցիչները նույնպես հրապարակավ բարձրացրին Հայաստանի անդամակցության շարունակման հարցը՝ կոչ անելով ազգային հանրաքվե անցկացնել երկրի ԵԱՏՄ կարգավիճակի վերաբերյալ և պնդելով, որ ԵՄ-ին ավելի խոր համաձայնեցումը անհամատեղելի է Միությանը մասնակցության հետ: Թեև դրանք խիստ իրավական իմաստով պաշտոնական պատժամիջոցներ չեն, այդ միջոցները նպաստեցին այն ընկալման ձևավորմանը, որ ԵԱՏՄ

մեխանիզմների միջոցով կիրառվում է տնտեսական պայմանականության աճ:

Հայաստանի Կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանի գնահատմամբ՝ Ռուսաստանի կողմից հայկական ապրանքների նկատմամբ վերջերս կիրառված ներմուծման սահմանափակումները կարող են նվազեցնել Հայաստանի ՀՆԱ-ն մինչև 2%-ով՝ այն պեսիմիստական սցենարի դեպքում, երբ տուժած արտադրողները չեն կարողանում ապահովել արտահանման այլընտրանքային ուղղություններ:⁸ Սահմանափակումները ազդել են արտահանմանն ուղղված մի քանի ոլորտների վրա, այդ թվում՝ ծաղիկների, թարմ մրգերի և բանջարեղենի, ձկնամթերքի, հանքային ջրերի, գինու և կոնյակի, որոնցից շատերը ավանդաբար մեծապես կախված են եղել ռուսական շուկա մուտք գործելուց: Ի պատասխան՝ Հայաստանի կառավարությունը համեմատաբար արագ քայլեր ձեռնարկեց տուժած արտադրողների և արտահանողների համար աջակցության միջոցառումներ ներդնելու համար՝ ներառյալ սուբսիդավորման մեխանիզմները, շուկայի դիվերսիֆիկացման նախաձեռնությունները և արտահանման այլընտրանքային ուղղությունների հասանելիությունը հեշտացնելու ջանքերը: Թեև քիչ հավանական է, որ այս միջոցառումները լիովին չեզոքացնեն անմիջական տնտեսական ազդեցությունը, դրանք արտացոլում են ավելի լայն քաղաքական ջանքեր, որոնք ուղղված են միասնական արտաքին շուկայից կառուցվածքային կախվածության նվազեցմանը, տնտեսական դիմակայունության ամրապնդմանը և Հայաստանի առևտրային հարաբերությունների դիվերսիֆիկացիայի արագացմանը:⁹ Այս համատեքստում Եվրամիության տնտեսական դերը Հայաստանում դարձել է ավելի տեսանելի և ռազմավարական առումով ավելի կարևոր: ԵՄ-Հայաստան ռազմավարական օրակարգը հստակորեն առաջնահերթություն է տալիս առևտրի դիվերսիֆիկացիային՝ որպես կառուցվածքային կախվածությունները նվազեցնելու և տնտեսական դիմակայունությունը բարձրացնելու միջոց: Չուգահեռաբար մի շարք

⁸https://www.armenianclub.com/2026/06/16/central-bank-governor-outlines-possible-consequences-of-restrictions-on-armeni/?utm_source=chatgpt.com

⁹“EU Readies Trade Relief for Armenia after Russian Import Bans”, FT, 17 June, 2026, <https://www.ft.com/content/82c8ca57-a4ba-4387-a4a9-d6e020317610?syn-25a6b1a6=1>

ուլորտներում այն նոր հնարավորություններ է ստեղծում եվրոպական ընկերությունների համար՝ ներառյալ ենթակառուցվածքները, վերականգնվող էներգիան, թվային ծառայությունները և գյուղատնտեսությունը:

Այս ներգրավվածության կենտրոնական մասը 2024-2027 թվականների համար նախատեսված 270 միլիոն եվրոյի Դիմակայունության և աճի ծրագիրն է (RGP), որը հայտարարվել է 2024 թվականի ապրիլին: Ծրագիրը ներառում է 200 միլիոն եվրոյի դրամաշնորհներ՝ կառավարման բարեփոխումներին, սոցիալ-տնտեսական դիմակայունությանը և ոլորտային արդիականացմանը աջակցելու համար, ինչպես նաև 70 միլիոն եվրոյի ներդրումային դրամաշնորհներ՝ ուղղված կապի, էներգետիկ անցման, տրանսպորտային ենթակառուցվածքների և մասնավոր հատվածի զարգացմանը: Սա ներկայացնում է ԵՄ ֆինանսական ներգրավվածության զգալի աճ՝ նախորդ ծրագրավորման փուլերի համեմատ, և արտացոլում է տեխնիկական աջակցության վրա հիմնված մոտեցումից դեպի ներդրումակենտրոն աջակցության աստիճանական անցումը:¹⁰

Բյուջետային ուղղակի աջակցությունից զատ՝ ԵՄ-ի «Գլոբալ դարպաս» ռազմավարության շրջանակում ձևավորված ավելի լայն ներդրումային շրջանակը վերջին տարիներին արագորեն ընդլայնվել է:²⁰²⁴ թվականից ի վեր ԵՄ-ի աջակցությամբ ձևավորված ներդրումային պորտֆելը Հայաստանում գնահատվում է ավելի քան 2,5 միլիարդ եվրո, ինչը համարժեք է երկրի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) մոտ 10%-ին: Այդ ներդրումները հիմնականում ուղղված են ՓՄՁ-ների, տրանսպորտային միջանցքների, էներգաարդյունավետության, թվային ենթակառուցվածքների, ջրային ռեսուրսների կառավարման և կրթության ոլորտներին: Թեև դրանք հաճախ իրականացվում են տարբեր ֆինանսական գործիքների միջոցով և ունեն մասնատված կառուցվածք, դրանց ռազմավարական նպատակադրումն ավելի ու ավելի համահունչ է

⁸https://www.armenianclub.com/2026/06/16/central-bank-governor-outlines-possible-consequences-of-restrictions-on-armeni/?utm_source=chatgpt.com

դառնում՝ նպաստել Հայաստանի առավել խոր ինտեգրմանը եվրոպական տնտեսական ցանցերին՝ միաժամանակ նվազեցնելով երկրի խոցելիությունը արտաքին ցնցումներից:

ԵՄ-ի հետ ավելի սերտ համաձայնեցման հնարավոր տնտեսական օգուտները չեն սահմանափակվում միայն ներդրումային հոսքերով: Դրանք նաև ներառում են ավելի շոշափելի, քաղաքացիների մակարդակի շահույթներ: Մասնակի կարգավորիչ միաձուլումը և ԵՄ շուկաներ ավելի խոր մուտքը կարող են մեծացնել փոքր և միջին ձեռնարկությունների արտահանման եկամուտները, բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը արտահանման կողմնորոշված ոլորտներում և բարելավել սպառողների բարեկեցությունը՝ ավելի բարձր չափանիշների և մրցակցության միջոցով: Ժամանակի ընթացքում այս ազդեցությունները սերտորեն նպաստում են աղքատության կրճատմանը:

Թեև վերջին տարիներին արձանագրվել է տնտեսական աճ, Հայաստանում աղքատության մակարդակը շարունակում է մնալ զգալի: Այն հատկապես զգայուն է զբաղվածության որակի, տարածաշրջանային անհավասարության և կայուն եկամտի աղբյուրների հասանելիության նկատմամբ: Համաձայն Համաշխարհային բանկի և ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2022–2023 թվականներին բնակչության մոտ 23–25 տոկոսը շարունակում էր գտնվել ազգային աղքատության գծից ցածր՝ ընդ որում աղքատության տարածվածությունը գյուղական բնակավայրերում զգալիորեն ավելի բարձր էր, քան Երևանում: ԵՄ կողմից աջակցվող գյուղական ենթակառուցվածքների, կրթության և ՓՄՁ ֆինանսավորման ծրագրերը, մասնավորապես՝ 2024-2027 թվականների Դիմակայունության և աճի ծրագրի շրջանակներում, սկսում են լուծել այս կառուցվածքային սահմանափակումները՝ չնայած դրանց հետևանքները մնում են աստիճանական և հիմնականում միջնաժամկետ:¹¹

¹¹World Bank, Poverty and Equity Data Portal: Armenia; Statistical Committee of the Republic of Armenia, Social Snapshot and Poverty in Armenia; EEAS, A Resilience and Growth Plan for Armenia 2024-2027 (Համաշխարհային բանկ, Աղքատության և հավասարության տվյալների պորտալ, Հայաստան; ՀՀ վիճակագրական կոմիտե, Սոցիալական պատկերը և աղքատությունը Հայաստանում; ԵՄԱԾ, Դիմակայունության և աճի ծրագիր Հայաստանի համար 2024-2027 թվականներին):

Կարևոր է նաև նշել, որ Հայաստանի տնտեսական նշանակությունը ԵՄ-ի համար չի որոշվում նրա չափսերով: 2024 թվականին ՀՆԱ-ն գնահատվում է մոտավորապես 25,8 միլիարդ դոլար, ուստի Հայաստանը համեմատաբար փոքր տնտեսություն է: Այնուամենայնիվ, այն ռազմավարական կարևոր դիրք է զբաղեցնում ԵՄ Արևելյան գործընկերության շրջանակներում: ԵՄ-ն ներկայումս Հայաստանի չորրորդ խոշորագույն առևտրային գործընկերն է ընդհանուր առմամբ և կազմում է հայկական արտահանման մոտավորապես 4-5 տոկոսը: Ավելի կարևոր է, որ դրա դերը ընդլայնվում է ավելացված արժեքի արտադրության հետ կապված ոլորտներում, այլ ոչ թե ապրանքային առևտրի, ինչը մեծացնում է հարաբերությունների երկարաժամկետ ռազմավարական նշանակությունը:

Կենտրոնական փոխգիջումը մնում է պարզ: ԵԱՏՄ շրջանակը ապահովում է շարունակականություն, շուկայի մուտք և կայունություն, սակայն դա արվում է կարգավորիչ ինքնավարության և եվրոպական տնտեսական տարածքի հետ ավելի խոր ինտեգրման հաշվին: ԵՄ շրջանակն առաջարկում է ավելի մեծ դիվերսիֆիկացում, սակայն միաժամանակ պահանջում է շարունակական բարեփոխումների ջանքեր և անցումային ծախսերի ուշադիր կառավարում:

Իրական հարցը, վերջին հաշվով, այն չէ, թե արդյոք Հայաստանը «ընտրություն է կատարում» տնտեսական մոդելների միջև՝ դեկլարատիվ իմաստով, այլ թե ինչպես է երկիրը գործնականում կառավարում նրանց միջև առկա իրական լարվածությունը: Սա նշանակում է բարեփոխումների փուլային իրականացում, որը համակարգային ցնցումներ չի ստեղծի, կմեղմի սոցիալական ծախսերը ամենաշատ զգայուն տեղերում և կապահովի, որ դիվերսիֆիկացիայի օգուտները չկենտրոնանան ընկերությունների, ոլորտների կամ քաղաքային կենտրոնների նեղ խմբում:

Մարդկանց մեծամասնության համար՝ հատկապես երևանից դուրս բնակվողների, տնտեսական քաղաքականության եվրոպական ուղղվածությունը չի գնահատվելու առևտրի վիճակագրական ցուցանիշների կամ ռազմավարական շրջանակների տեսանկյունից: Այն առավելապես գնահատվելու է շատ ավելի գործնական չափանիշներով՝ արդյո՞ք աշխատատեղերը ավելի կայուն են դառնում, եկամուտները՝ ավելի կանխատեսելի, բնակչության տարբեր խմբերի համար տնտեսական

հնարավորությունները հավասարաչափ ավելի հասանելի: Այս առումով Հայաստանի՝ դեպի Եվրոպա տնտեսական զարգացման ուղու հաջողությունը կախված կլինի ոչ միայն նրանից, թե ինչպես է այն մշակվում Բրյուսելում կամ Երևանում, այլև, թե ինչպես է այն ընկալվում երկրի ներսում՝ քաղաքացիների առօրյա կյանքի և կենսապայմանների մակարդակում:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ – ԲԱԺԻՆ 5

Տնտեսություն. ոլորտի գնահատում, հնարավորություններ և սահմանափակումներ

ՎՁԵԲ-ի անցումային զեկույց 2025; Արժույթի միջազգային հիմնադրամ, Հայաստան, հոդված IV, 2025; Համաշխարհային բանկ, Հայաստան, 2026; ԵԱՏՄ պայմանագիր 2014

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ոլորտ	ԵՄ հետաքրքրություն	Հայաստանի պատրաստվածությունը	ԵԱՏՄ պատնեշ	5 տարվա ներուժ
SS / թվային ծառայություններ	Բարձր	Բարձր	Ցածր	Բարձր
Վերականգնվող էներգիա	Բարձր	Միջին	Միջին	Բարձր
Գյուղատնտեսություն / սնունդ	Միջին	Միջին	Միջին	Միջին
Արտադրություն (ՈՒՕՆ)	Ցածր	Ցածր	Բարձր	Ցածր
Ֆինանսական ծառայություններ	Միջին	Ցածր	Բարձր	Միջին
Տուրիզմ	Ցածր	Բարձր	Միջին	Միջին
Կանաչ անցում	Բարձր	Ցածր-Միջին	Միջին	Բարձր

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ▶ SS ոլորտը (5,5 տոկոս ՀՆԱ, 20 տոկոս + տարեկան աճ) արդեն ինտեգրված է ԵՄ-ին. GDPR-ի համաձայնեցումը և թվային միասնական շուկայի մասնակցությունը ընդլայնում են այս ոլորտը՝ առանց ԵԱՏՄ-ի լուծման անհրաժեշտության:
- ▶ Վերականգնվող էներգիայի ներդրումները լուծում են Հայաստանի ամենալուրջ ռազմավարական խոցելիությունը՝ ռուսական գազային կախվածությունը՝ ԵՄ-ի կողմից «Դիմակայունություն և աճի պլանի» շրջանակներում տրամադրվող ուժեղ ֆինանսական աջակցությամբ:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

- ▶ ԵԱՏՄ պայմանագրային պարտավորությունները կանխում են համապարփակ առևտրային ինտեգրացիան. սա իրավական սահմանափակում է, որը չեն կարող անտեսել բարի կամքը և քաղաքական հայտարարությունները:
- ▶ Թուրքիայի և Ադրբեջանի հետ փակ սահմանները վերացնում են երկու հարակից շուկաները և լոգիստիկ ծախսեր են առաջացնում արտահանման մեծ մասի կատեգորիաների համար:

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ▶ Դիմակայունության և աճի ծրագիրը (270 միլիոն եվրո դրամաշնորհների և վարկերի տեսքով) ԵՄ-ի կողմից ֆինանսավորում է տրամադրում բարեփոխումների փաստաթղթավորված առաջընթացի հետ կապված պայմաններով:

- ▶ ՎՉԵԲ-ը և ԵՆԲ-ն երկարաժամկետ համբերատար կապիտալ են առաջարկում այնպիսի տոկոսադրույքներով, որոնց ներքին ֆինանսավորումը չի կարող համեմատվել, ինչը կարևոր է եներգետիկայի և ենթակառուցվածքների ներդրումների համար:

- ▶ ԵՄ GSP+ սակագնային արտոնությունները շուկա մուտք գործելու արտոնություններ են տրամադրում, որոնք չեն պահանջում ԵԱՏՄ-ից դուրս գալ և արդեն հասանելի են հայ արտահանողների համար:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

- ▶ Ուղեղների արտահոսք. վիզաների դյուրացումը և Erasmus+ շարժունակությունը օգուտ են բերում անհատներին, բայց տեսականորեն նվազեցնում են որակավորված աշխատուժի պաշարը, ինչը պահանջում է ներքին տնտեսության արդիականացումը՝ անկեղծ հաղորդակցության արժանի փոխզիջում:

- ▶ Ներդրումային միջավայրի թույլ կողմերը՝ դատական անորոշությունը, պայմանագրերի կիրառման բացերը, նվազեցնում են Հայաստանի գրավչությունը ռիսկի նկատմամբ զգայուն եվրոպական կապիտալի համար, նույնիսկ այն դեպքերում, երբ սակագնային խոչընդոտներ չեն կիրառվում:

- ▶ Ռուսաստանի տնտեսական ճնշումը ԵՄ արագացված կողմնորոշմանը իրատեսական և հավանական պատասխան է. այս ռիսկին ամենաշատ ենթարկվում են Երևանից դուրս գտնվող տնային տնտեսություններն ու բիզնեսները:

Դասեր Վրաստանից, Մոլդովայից և Ուկրաինայից

Արևելյան գործընկերության երեք երկրներ՝ Վրաստանը, Մոլդովան և Ուկրաինան, ստորագրել են Ասոցացման համաձայնագրեր Եվրամիության հետ և հետագայում ստացել ԵՄ անդամակցության թեկնածուի կարգավիճակ: Նրանց փորձը Հայաստանի համար չի կարող դիտարկվել ընդ որպես պատրաստի օրինակ, որը պետք է մեխանիկորեն կրկնօրինակել, ոչ էլ որպես նախազգուշացնող օրինակ, որին պետք է ընտրովի հղում կատարել: Փոխարենը, այդ երկրների փորձը ձևավորում է կուտակային ապացույցների մի ամբողջություն՝ անհավասար, քաղաքականապես վիճարկելի, երբեմն նաև ներքին հակասություններով, և դեռևս գտնվում է զարգացման ընթացքի մեջ: Այն արժեքավոր պատկերացում է տալիս, թե ինչ արդյունքներ կարող է ապահովել եվրոպական ինտեգրումը, երբ այն փոխադրում է հետխորհրդային քաղաքական տնտեսությունների առանձնահատկությունների, ներքաղաքական ուժային պայթարի, արտաքին ճնշումների և ինստիտուցիոնալ բարեփոխումների բարդ ու երկարատև գործընթացի հետ:

Հետևաբար, այս դեպքերի ուշադիր ուսումնասիրությունն ավելի օգտակար է, քան ընտրողական մեջբերումները, որոնց երբեմն հակված են եղել Հայաստանի եվրոպական զարգացման հետազոծի թե՛ կողմնակիցները, թե՛ քննադատները՝ ձգտելով հաստատել նախկինում գոյություն ունեցող դիրքորոշումները:

Երեք երկրներում էլ մեկ օրինաչափություն առանձնապես կայուն է՝ ԵՄ չափանիշներին ինստիտուցիոնալ և օրենսդրական ձևական համապատասխանության ու ներքին ինստիտուտների իրական գործունեության, քաղաքական գործելակերպի և քաղաքական մշակույթի միջև պահպանվող զգալի անհամապատասխանությունը: Այս անհամապատասխանությունը պատահական բնույթ չի կրում: Այն ցույց է տալիս, որ հետխորհրդային երկրներում օրենսդրության համապատասխանեցումը ԵՄ չափանիշներին համեմատաբար ավելի դյուրին գործընթաց է, քան այն քաղաքական-տնտեսական միջավայրի խորքային վերափոխումը, որի շրջանակներում գործում են այդ ինստիտուտները:

Վրաստանը, չնայած տարբեր ոլորտներում ԵՄ չափանիշներին համապատասխանող լայնածավալ բարեփոխումների իրականացմանը, շարունակում է բախվել դատական իշխանության անկախության և դատական համակարգի քաղաքական ազդեցությունների նկատմամբ խոցելիության վերաբերյալ պարբերաբար բարձրացվող մտահոգություններին: Մոլդովայում ստեղծվել են կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուտներ, որոնք, թեև ձևականորեն ունեն ամուր ինստիտուցիոնալ հիմքեր, գործնականում հաճախ դժվարություններ են ունեցել քաղաքականապես զգայուն գործերի քննության արդյունավետ առաջմղման, ինչպես նաև կառավարությունների փոփոխության պայմաններում իրավակիրառման հետևողականության պահպանման հարցում: Ուկրաինան իր հերթին ստեղծել է տարածաշրջանի առավել անկախ կոռուպցիայի դեմ պայքարի մի քանի մարմին, այդ թվում՝ Ուկրաինայի Ազգային հակակոռուպցիոն բյուրոն (NABU): Սակայն միաժամանակ այդ կառույցները շարունակաբար ենթարկվել են քաղաքական ճնշումների, որոնք ուղղված են եղել դրանց լիազորությունների, ազդեցության և գործառնական ինքնավարության սահմանափակմանը ներկայիս քաղաքական պայմաններում:

Արևելյան գործընկերության երկրների փորձից բխող հիմնական եզրահանգումը ոչ թե ինստիտուցիոնալ ձախողումն է, այլ ինստիտուցիոնալ լարվածությունը. բարեփոխումների շրջանակները իրական են, իրավականորեն պարտադիր և իրենց կառուցվածքով հաճախ խորթային փոխակերպում ենթադրող: Միևնույն ժամանակ, ներթափաքական դիմադրությունը նույնպես իրական է և հաճախ հարմարվող բնույթի: Այն չի վերանում իրավական համահարթեցման արդյունքում, այլ հարմարվում է, վերաձևավորվում և հաճախ դրսևորվում է ազդեցության ավելի քիչ տեսանելի, սակայն արդյունավետ ձևերով:

Հայաստանի համար ամենակարևոր դասը ոչ թե նորմատիվ է, այլ գործառնական. ԵՄ հետ ինտեգրումը չի վերացնում ինստիտուտների շուրջ ներթափաքական հակամարտությունները, այլ հակառակը՝ հաճախ խորացնում է դրանք: Բարեփոխումները ստեղծում են հաղթողներ և պարտվողներ քաղաքական և տնտեսական համակարգում, և այդ փոփոխություններից տուժող կամ շահող խմբերը հազվադեպ են մնում պասիվ: Արդյունքում, ԵՄ-ին ուղղված բարեփոխումների իրականացման փուլը սովորաբար քաղաքականապես ավելի զգայուն է, քան դրանց օրենսդրական ձևակերպման փուլը:

Սա ցույց է տալիս, որ Հայաստանը նույնպես պետք է ակնկալի նմանատիպ լարվածություն՝ ստանձնած պաշտոնական հանձնառությունների և դրանց գործնական իրականացման միջև: Միաժամանակ այն վկայում է, որ բարեփոխումների կայունությունը պայմանավորված կլինի ոչ այնքան ԵՄ չափանիշներին համապատասխան օրենսդրության ընդունմամբ, որքան այնպիսի ներքին մեխանիզմների առկայությամբ, որոնք ունակ կլինեն վերահսկելու այդ օրենսդրության կիրարկումը, արձանագրելու սահմանված պահանջներից շեղումները և ժամանակի ընթացքում պահպանելու հանրային ու ինստիտուցիոնալ ճնշումը՝ ապահովելով, որ ստանձնած պարտավորությունները հետևողականորեն կատարվեն:

Այս առումով Հայաստան–ԵՄ ինտեգրումը պետք է ընկալվի ոչ թե որպես գծային և աստիճանական մերձեցման գործընթաց, այլ որպես երկարատև ինստիտուցիոնալ, իսկ երբեմն նաև արտաքին քաղաքական «սթրես-թեստավորման» փուլ: Արդյո՞ք այս գործընթացը կհանգեցնի կայուն և երկարաժամկետ բարելավումների, կախված է հիմնականում ներքին

գործոններից՝ քաղաքացիական հասարակության դիմադրողականությունից, վերահսկող ինստիտուտների անկախությունից, չկատարումների քաղաքական արժեքից և այն հանգամանքից, թե որքանով են բարեփոխումները արմատավորվում ներքաղաքական մրցակցության մեջ՝ արտաքին պարտադրանքի արդյունք լինելու փոխարեն:

Հայաստանը, ինչպես և Արևելյան գործընկերության մյուս երկրները, պետք է ԵՄ ինտեգրումը դիտարկեն ոչ թե որպես զուտ տեխնիկական համապատասխանեցման գործընթաց, այլ որպես ինստիտուցիոնալ վերափոխման քաղաքականորեն վիճահարույց գործընթաց: Հիմնական հարցը ոչ թե այն է, թե արդյոք բարեփոխումները ձևականորեն ընդունվում են, այլ թե արդյոք դրանք կարող են պահպանվել քաղաքական ճնշման, կառավարությունների փոփոխության և մրցակցող ներքին շահերի պայմաններում: Այս տեսանկյունից Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի փորձը Հայաստանի համար ոչ այնքան այն ուղին է, որով նա անխուսափելիորեն պետք է շարժվի, որքան այն բարդ քաղաքական և ինստիտուցիոնալ միջավայրի իրատեսական պատկերացումը, որի միջով նա ստիպված է լինելու անցնել:

Գործնական օրինակ. Վրաստան

Վրաստանի Ասոցացման համաձայնագիրը ուժի մեջ է մտել 2014 թվականին և 2014–2019 թվականներին ԵՄ-ի և Վրաստանի միջև առևտրաշրջանառությունն աճել է ավելի քան 35 տոկոսով, զգալիորեն ընդլայնվել է գյուղատնտեսական արտադրանքի արտահանումը, իսկ 2017 թվականին Վրաստանի քաղաքացիները ստացել են Շենգենյան գոտի առանց վիզայի մուտք գործելու հնարավորություն: Այս փաստերը վկայում են, որ ԵՄ-ի հետ համագործակցության շրջանակը շոշափելի տնտեսական և շարժունակության առավելություններ կարող է ապահովել նույնիսկ փոքր և աշխարհագրական սահմանափակումներ ունեցող երկրների համար:

Կառավարման զարգացումների ընթացքը այս դեպքում առավել ուսանելի բաղադրիչն է: 2012 թվականից հետո «Վրացական երազանք» կառավարության կոնսուլիդացիան հանգեցրեց ԵՄ բարեփոխումների պարտավորությունների նկատմամբ մոտեցման ձևավորմանը, որը ձևականորեն համապատասխանող էր, սակայն բովանդակային առումով՝

ընտրովի: Քաղաքացիական հասարակությունը ձևական մակարդակում պահպանեց աջակցությունը, միևնույն ժամանակում աստիճանաբար մարգինալացվեց: Դատական համակարգը իրականացվեց ձևական բարեփոխումների շրջանակում, սակայն շարունակեց ծառայել քաղաքական շահերին: 2023–2024 թվականներին ընդունված մի շարք այսպես կոչված «օտարերկրյա գործակալների մասին օրենքները», որոնք ուղղված էին օտարերկրյա ֆինանսավորում ստացող քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, ամրապնդեցին տարիների ընթացքում կուտակված աստիճանական հետընթացի միտումը: Արդյունքում ԵՄ անդամակցության թեկնածության շուրջ քննարկումները կասեցվել են:

Հայաստանի քաղաքացիական հասարակության համար վրացական փորձից բխող հիմնական դասը հստակ է. ԵՄ-ն ժամանակի ընթացքում կիրառում է պայմանականության մեխանիզմները՝ ներառյալ համագործակցության կասեցման սպառնալիքն այն դեպքերում, երբ ստանձնած պաշտոնական պարտավորությունների և իրական գործելակերպի միջև տարբերությունն այլևս անտեսելի է դառնում: Տնտեսական ինտեգրման արդյունքում ստացված ձեռքբերումները չեն ապահովում նման զարգացումներից պաշտպանվածություն: Միևնույն ժամանակ քաղաքացիական հասարակության այն կազմակերպությունները, որոնք աստիճանաբար սահմանափակվեցին, հենց այն կառույցներն էին, որոնք հետևում և փաստագրում էին այդ անհամապատասխանությունը: Այս համատեքստում քաղաքացիական հասարակության մոնիթորինգային կարողությունները ԵՄ ինտեգրման գործընթացում ոչ թե երկրորդական դեր ունեն, այլ առանցքային նշանակություն՝ ապահովելով պայմանականության մեխանիզմների գործառնական արդյունավետությունը:

Հիմնական դասեր Հայաստանի համար

- ԵՄ-ԽՅԱԳ շրջանակներում առևտրային ինտեգրման դրական ազդեցությունները փաստագրված են. հիմա տարվա ընթացքում Վրաստանի ԵՄ-ի հետ առևտրաշրջանառության ավելի քան 30 տոկոս աճը վկայում է համաձայնագրի գործնական արդյունավետության մասին: Թեև այս ցուցանիշը կարող էր լինել ավելի բարձր՝ հաշվի առնելով, որ վերջին

տարիներին Վրաստանը մասամբ վերակողմնորոշել է իր տնտեսական քաղաքականությունը դեպի ռուսական շուկա, ձեռք բերված արդյունքները կարևոր նախադեպ են Հայաստանի համար՝ հատկապես այն ոլորտներում, որտեղ ՀՀԳՀ-ն նախատեսում է խորացված տնտեսական և կարգավորիչ ինտեգրում:

- Առանց վիզայի Շենգենյան գոտու մուտքը իրատեսական և քաղաքականապես նշանակալի նպատակ է. Վրաստանի 2017 թվականի նվաճումը հաջորդեց տարիների կենտրոնացված տեխնիկական համապատասխանության աշխատանքին, այլ ոչ թե քաղաքական հայտարարություններին;
- ԵՄ-ն հետևողականորեն կիրառում է պայմանականության սկզբունքը, և տնտեսական ձեռքբերումները չեն ապահովում «անձեռնմխելիություն»: Հենց քաղաքացիական հասարակության կողմից պաշտոնապես ստանձնած պարտավորությունների և դրանց իրական կատարման միջև առկա տարբերությունների համակարգված մշտադիտարկումն ու փաստաթղթավորումն են, որ հիմք են ստեղծում ԵՄ-ի կողմից պայմանականության և վերահսկողության մեխանիզմների գործարկման համար;
- Կոռուպցիայի դեմ պայքարի ընտրողական կիրառումն ավելի արագ է քայքայում բարեփոխումների հեղինակությունը, քան բարեփոխումների բացակայությունը. նախորդների նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելը՝ միաժամանակ պաշտպանելով ներկայիս դաշնակիցներին, այն օրինաչափությունն է, որը ԵՄ մոնիթորինգային ապարատը ի վերջո հայտնաբերում և արձագանքում է:

Գործնական օրինակ. Մոլդովա

Կառուցվածքային առումով Մոլդովայի իրավիճակը շատ նման է Հայաստանին. փոքր, տնտեսապես անկայուն երկիր՝ խորապես ենթակա արտաքին քաղաքական և տնտեսական ազդեցության, ԵՄ անդամ երկրներում մեծ սփյուռքով և եվրոպամետ և ռուսամետ կառավարությունների միջև տատանումների պատմությամբ: 2020 թվականից ի վեր Մայա Սանդուի կառավարության բարեփոխումների թափը իսկապես տպավորիչ է եղել. վերսկսվել է կոռուպցիայի դեմ պայքարի հետապնդումը 2014 թվականի բանկային խարդախության հետ կապված անձանց դեմ, որի արդյունքում Մոլդովայի ֆինանսական

հաստատություններից անհետացել է մոտ մեկ միլիարդ դոլար: Մոլդովան ԵՄ թեկնածուի կարգավիճակ ստացավ 2022 թվականի հունիսին, անդամակցության գործընթացը սկսեց 2024 թվականին, իսկ 2026 թվականին բացվել են առաջին գլխի բանակցությունները:

Մոլդովայի փորձի ոչ այնքան հաճելի կողմն այն է, որ բարեփոխումների արագությունը երբեմն գերազանցել է դրանց իրականացման որակը, ինչի արդյունքում ֆորմալ համապատասխանությունը գերազանցել է դրանք կիրառելու գործնական կարողությունները: Չնայած քաղաքացիական հասարակությունը ավելի ուժեղ է, քան տասը տարի առաջ, սակայն, համեմատած իրականացվող բարեփոխումների մասշտաբի հետ, թվաքանակով փոքր է մնում: Միևնույն ժամանակ Մոլդովայի կառուցվածքային տնտեսական կախվածությունը ԵՄ երկրներից ստացվող դրամական փոխանցումներից՝ մոտավորապես մեկ միլիոն մոլդովացիների աշխատանքային միգրացիայի արդյունքում (Ռումինիա, Իտալիա և Գերմանիա), նպաստում է տնային տնտեսությունների եկամուտների կայունությանը, սակայն միաժամանակ նվազեցնում է ներքին աշխատատեղերի ստեղծման և տնտեսական բարեփոխումների վրա ճնշման աստիճանը: Հայաստանի համադրելի կախվածությունը Ռուսաստանից ստացվող դրամական փոխանցումներից ստեղծում է այլ, սակայն կառուցվածքային առումով նմանատիպ դինամիկա:

Հայաստանի համար Մոլդովայի փորձից բխող ամենակարևոր դասը կապված է ժամանակային գործոնի հետ: Սանդուխտի կառավարության բարեփոխումների «պատուհանը» համընկավ պատմականորեն եզակի աշխարհաքաղաքական կոնֆիգուրացիայի հետ՝ Ռուսաստանի ուշադրության կենտրոնացումը Ուկրաինայի պատերազմի վրա, ԵՄ թեկնածու երկրի կարգավիճակի տրամադրման դինամիկան և Արևմուտքի շարունակական քաղաքական ներգրավվածությունը: Այս համադրությունը ստեղծեց այնպիսի պայմաններ, որոնք թույլ տվեցին բարեփոխումների արագություն, որը դժվար թե հնարավոր լիներ սովորական իրավիճակներում: Հայաստանը ներկայումս բախվում է համադրելի հնարավորությունների պատուհանի: Սակայն դրա բաց մնալու տևողությունը փոփոխական է, որի նկատմամբ վերահսկողություն չունեն ղչ Երևանը, ղչ Բրյուսելը:

Հիմնական դասեր Հայաստանի համար

- ԵՄ թեկնածուի կարգավիճակը ստեղծում է որակապես տարբեր բարեփոխումների դիմամիկա՝ ավելի խիստ պայմանականությամբ, ավելի ինտենսիվ տեխնիկական ներգրավվածությամբ, ավելի բարձր քաղաքական շահագրգռվածությամբ: Հայաստանը պետք է ձգտի առավելագույնս օգտագործել այն գործիքներն ու հնարավորությունները, որոնք գործնականում համարժեք են այդ կարգավիճակին՝ ԵՄ-ի հետ գործող ՀԸԳՀ շրջանակներում: Հաշվի առնելով, որ Հայաստանը ներկայումս կարող է օգտվել ԵՄ-ի ինստիտուցիոնալ աջակցության և քաղաքական ներգրավվածության այնպիսի մակարդակից, որը տրամադրվում է ԱլԳ և հետխորհրդային առավել առաջադեմ գործընկերակրներին, անհրաժեշտ է հետևողականորեն օգտագործել այդ հնարավորությունները՝ բարեփոխումների արագացման և եվրոպական ինտեգրման խորացման նպատակով:
- Սփյուռքի ստացվող դրամական փոխանցումները նպաստում են տնային տնտեսությունների ֆինանսական կայունությանը, սակայն միաժամանակ կարող են թուլացնել ներքին տնտեսական բարեփոխումների իրականացման նկատմամբ ճնշումը: Հայաստանի դեպքում Ռուսաստանից և մասամբ արևմտյան երկրներից ստացվող դրամական փոխանցումներից կախվածությունը նույնպես պահանջում է նույնքան անկեղծ վերլուծություն: Միևնույն ժամանակ պետք է ընդունել, որ, ի տարբերություն Մոլդովայի, Հայաստանի սփյուռքի քաղաքացիները ներկայումս չեն մասնակցում Հայաստանի ընտրություններին, ինչը սահմանափակում է սփյուռքի անմիջական քաղաքական ազդեցությունը երկրի ներքին քաղաքական գործընթացների վրա:
- Աշխարհաքաղաքական բացառիկ դասավորությունների արդյունքում ձևավորվող բարեփոխումների հնարավորությունների պատուհանները ժամանակային առումով սահմանափակ են: Հետևաբար, ռազմավարական առաջնահերթությունը պետք է լինի այդ հնարավորությունների ընթացքում ինստիտուցիոնալ ձեռքբերումների ամրապնդումն ու կայունացումը՝ մինչև այդ պայմանների փոփոխությունը:

Գործնական օրինակ. Ուկրաինա

Ուկրաինայի փորձը ԱԼԳ մեջ ամենածայրահեղն է և ամենաքիչն է ուղղակիորեն կիրառելի Հայաստանի իրավիճակի համար, քանի որ Ռուսաստանի հետ պատերազմը խաթարել է ինտեգրման բնականոն դինամիկան այնպես, որ շատ առումներով համեմատությունները դարձել են ոչ լիովին վստահելի: Ուկրաինայի խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու (ԽՀԱԱԳ) փորձը մինչև 2022 թվականի փետրվարը փաստարկված արդյունքներ տվեց՝ ԵՄ առևտրի զգալի աճ, գյուղատնտեսական արտահանման ընդլայնում, մասնավորապես՝ Ուկրաինայի Ազգային հակակոռուպցիոն բյուրոյի (NABU) և Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալության (NACP) գործունեության միջոցով: Այս ձեռքբերումները գրանցվել էին մինչև պատերազմը և ապացուցում էին ԵՄ շրջանակի տնտեսական ներուժը՝ անկախ զինված հակամարտության ազդեցությունից:

Ուկրաինայի ամենաուսանելի ներդրումը Հայաստանի ռազմավարական վերլուծության մեջ կառուցվածքային է. Ուկրաինան մեկ տասնամյակ առաջ էր մղում ԵՄ-ին ինտեգրման գործընթացը՝ չունենալով այնպիսի անվտանգության շրջանակ, որը կարող էր իր աշխարհաքաղաքական ուղին դարձնել առավել պաշտպանված և նվազ խոցելի: Ռուսաստանի՝ 2022 թվականին պատերազմ սկսելու հաշվարկների վրա, ի թիվս այլ գործոնների, ազդել էր նաև այն գնահատականը, թե Ուկրաինայի լիարժեք ինտեգրումը արևմտյան ինստիտուցիոնալ կառույցներին վերջնականապես կփակի Ռուսաստանի ռազմավարական ազդեցության հնարավորությունները: Հայաստանը գործում է կառուցվածքային առումով համանման միջավայրում (թեև դերակատարներն ու հանգամանքները տարբեր են), պահպանվում է նույն հիմնարար օրինաչափությունը՝ արտաքին ճնշումը ԵՄ-ին ուղղված ինտեգրման գործընթացների նկատմամբ: Հետևաբար, անվտանգության ապահովման և ինստիտուցիոնալ բարեփոխումների գործընթացները չեն կարող տարանջատվել և իրականացվել հաջորդական փուլերով:

Հիմնական դասեր Հայաստանի համար

- NABU/NACP ինստիտուցիոնալ կառուցվածքը՝ անկախ, արտաքին մոնիթորինգի ենթարկվող, իրական դատախազական կարողություններով, կիրառելի մոդել է Հայաստանի կոռուպցիայի դեմ պայքարի ճարտարապետությունը ամրապնդելու համար:
- Ուկրաինական քաղաքացիական հասարակության՝ հանրային վերահսկողության գործառույթը, որը պահպանվել և շարունակվել է տարբեր քաղաքական ժամանակաշրջաններում, այն օրինակն է, որի հիման վրա պետք է զարգանան Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունները: Նրանց առաջնային առաքելությունը պետք է լինի ոչ թե եվրոպական ուղղվածության քաղաքականության պաշտպանությունը, այլ խիստ և համակարգված մշտադիտարկումը և փաստաթղթավորումը, թե արդյոք իրականացվող քաղաքականության բովանդակությունը համապատասխանում է հռետորաբանությանը:
- Անվտանգությունն ու ԵՄ ինտեգրումը չեն կարող իրականանալ հաջորդական փուլերով: Առանց անվտանգության ճարտարապետության հիմնարար հարցերը լուծելու՝ ԵՄ-ի հետ ինստիտուցիոնալ կապերի խորացումը ոչ թե հաշվարկված ռիսկ է, այլ կառուցվածքային խոցելիություն, ինչպես ցույց տվեց 2022 թվականի Ուկրաինայի նախադեպը:
- Պատերազմից առաջ խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի տնտեսական ձեռքբերումները իրական էին և փաստարկված: ԵՄ առևտրային ինտեգրման օգուտները չեն պահանջում անվտանգության աղետ, որպեսզի իրականանան, սակայն դրանք նաև ինքնաբերաբար չեն իրականանում:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ

Արևելյան գործընկերության ինտեգրում. Միջերկրային գնահատում 2026

Freedom House-ի անցումային երկրներ 2026; ՎՁԵԲ-ի անցումային զեկույց 2025;

ԵՅ առաջընթացի զեկույցներ 2026

ՀԻՄՆԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ՝ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ասպեկտ	Վրաստան	Մոլդովա	Ուկրաինա	Հայաստան (2026)
Ասոցացման համաձայնագիր	Այո (2014)	Այո (2014)	Այո (2014)	միայն ՀԸԳՀ
ԽՅԱԱԳ/ խորը առևտուր	Լրիվ ԽՅԱԱԳ	Լրիվ ԽՅԱԱԳ	Լրիվ ԽՅԱԱԳ	չկա (ԵԱՏՄ)
ԵՄ թեկնածուի կարգավիճակ	Բանակցությունները կասեցվել են 2024	շնորհվել է 2022	շնորհվել է 2022	Դեռ ոչ
Առանց վիզայի ճեղք	2017-ից	2014-ից	2017-ից	Դեռ ոչ
Բարեփոխումների ընթացքը	Վատանում է	Ուժեղ 2021+	Պատերազմով պայմանավորված	Դրական/ վիճարկվող
Դատական անկախություն	Մասնակի	Բարելավում	Մասնակի	Թույլ
Կոռուպցիայի դեմ պայքար	Ընտրողական	Արագացում	NABU/NACP	Ընտրողական
ԵԱՏՄ անդամակցություն	Ոչ	Ոչ	Ոչ	Այո (պարտավորեցնող)
Քաղաքացիական հասարակության ուժը	Ուժեղ	Աճող	Ուժեղ	Զափավոր
Ներքին քաղաքական կայունություն	Փխրուն 2024	Կայուն 2021+	Պատերազմի հետ կապված համախմբում	Վիճարկված

Իրատեսական օրակարգ.

առաջնահերթություն և հաջորդականություն

Ստորև ներկայացվածը նպատակ ունի իրատեսորեն սահմանելու, թե առաջիկա տասնամյակում Հայաստան–ԵՄ համագործակցությունն ինչ արդյունքներ կարող է իրականում ապահովել Հայաստանի և Նրա քաղաքացիների համար: Այն հիմնված է սույն փաստաթղթի կառուցվածքային վերլուծության, ինչպես նաև վերևում ներկայացված համեմատական տվյալների վրա:

Վիզայի ազատականացում. առաջնահերթություն, որը չի կարելի անտեսել

ՄՀԻ-ի 2026 թվականի հարցման համաձայն՝ 18–45 տարեկան Հայաստանի քաղաքացիների համար եվրոպական ինտեգրման ամենացանկալի և ամենահստակ արդյունքը եվրամիության անդամ պետություններով ազատ տեղաշարժի հնարավորությունն է: Վրաստանը Շենգենյան գոտի առանց վիզայի մուտքի իրավունք ստացավ 2017 թվականին, Մոլդովան՝ 2014 թվականին: Հայաստանը դեռևս հետ է մնում երկուսից էլ՝ մասնավորապես միգրացիայի կառավարման, ապաստանի ընթացակարգերի և ճամփորդական փաստաթղթերի անվտանգության չափանիշների ապահովման ոլորտներում:

Համապատասխան պետական մարմիններից բացի՝ այս գործընթացում անմիջական դեր ունի նաև Հայաստանի քաղաքացիական հասարակությունը: ԵՄ վիզաների ազատականացման հենանիշները հստակորեն ներառում են կոռուպցիայի դեմ պայքարի առաջընթացը, մարդու իրավունքների մշտադիտարկումը և անկախ քաղաքացիական ՀԿ-ների արդյունավետ գործունեությունը, որոնք բոլորն էլ նպաստում են եվրոպական հանձնաժողովի տեխնիկական գնահատման գործընթացին:

Դատական բարեփոխումներ. մյուս բոլոր ուղղությունների առանցքային նախապայմանը

ԵՄ ինտեգրման գրեթե բոլոր մյուս առաջնահերթությունները՝ ներդրումային միջավայրից և պայմանագրերի կիրարկումից մինչև կոռուպցիայի դեմ պայքար և իրավունքի գերակայություն, վերջին հաշվով կախված են դատական անկախությունից: Սա նաև այն ոլորտն է, որտեղ քաղաքական դիմադրությունն ամենաուժեղն է, որտեղ ԵՄ լծակները կառուցվածքային առումով ավելի սահմանափակ են անդամակցության հեռանկարի բացակայության դեպքում, և որտեղ պաշտոնական օրենսդրական համաձայնեցման և իրական ինստիտուցիոնալ վարքագծի միջև եղած անջրպետը մնում է ամենամեծը: ԵՄ-ի ազդեցությունն այս ոլորտում մեծ չափով հիմնված է տեխնիկական աջակցության, կառավարման հետ կապված ֆինանսական աջակցության, ինչպես նաև ԵԽ Վենետիկի հանձնաժողովի և եվրոպական այլ մոնիթորինգային կառույցների պարբերական գնահատումների վրա: Միաժամանակ դատական բարեփոխումները մնում են առավել զգայուն ուղղություններից

մեկը, քանի որ դրանք անմիջականորեն շոշափում են գործող ինստիտուցիոնալ համակարգից շահող արմատացած քաղաքական և տնտեսական շահերը, որոնք բնականաբար հակված են դիմակայելու նման փոփոխություններին:

Արևելյան գործընկերության ողջ փորձը ցույց է տալիս, որ դատական բարեփոխումները կառավարման բարեփոխումների տեխնիկական ենթաբաղադրիչ չեն, այլ դրանց առանցքային սահմանափակող գործոնը: Հետևաբար, Հայաստանում քաղաքացիական հասարակության ներգրավվածությունն այս ոլորտում առավել արդյունավետ կարող է լինել, եթե այն կենտրոնանա կոնկրետ և չափելի ցուցանիշների վրա՝ դատավորների նշանակման գործընթացների, գործերի բաշխման և քննության օրինաչափությունների, ինչպես նաև ես Վենետիկի հանձնաժողովի չափանիշներին համապատասխանության մշտադիտարկման վրա: Գործնական առումով նման մշտադիտարկումը Հայաստան–ԵՄ ինտեգրման առաջընթացի համար կարող է ունենալ ավելի մեծ նշանակություն, քան եվրոպական ուղղվածության օգտին իրականացվող ցանկացած ընդհանուր քարոզչություն:

Ոչ պակաս կարևոր է նաև հանրային վստահության հարցը, քանի որ դատական իշխանության անկախության ձևական երաշխիքներն ինքնին չեն կարող ապահովել կայուն արդյունքներ, եթե դրանք չեն ուղեկցվում արդարադատության համակարգի արդարության, անաչառության և բարեվարքության նկատմամբ հանրային վստահությամբ: Հայաստանում ընթացող բարեփոխումների ներկայիս փուլում, երբ օրենսդրական նշանակալի փոփոխություններ արդեն իրականացվել են, սակայն հանրային ընկալումները դատական համակարգի արդյունավետության վերաբերյալ շարունակում են մնալ հակասական, վճռորոշ նշանակություն կունենա ինչպես ինստիտուցիոնալ արդյունավետության բարձրացումը, այնպես էլ դատական համակարգի հանրային լեգիտիմության ամրապնդումը: Հենց այս երկու գործոնների համադրությունն է երկարաժամկետ հեռանկարում պայմանավորելու դատական բարեփոխումների գործընթացի վստահելիությունն ու հաջողությունը:

ԷլեկտրաԷներգիա. և՛ ռազմավարություն, և՛ տնտեսություն

ԵՄ աջակցությամբ վերականգնվող Էներգիայի ընդլայնումը կարող է զգալիորեն նվազեցնել Հայաստանի կախվածությունը ներմուծվող բնական գազից՝ միաժամանակ ամրապնդելով Էներգետիկ անվտանգությունը և նվազեցնելով երկարաժամկետ ներմուծման ծախսերը: Համաշխարհային բանկի, ԱԵՄԳ-ի և ՎՁԵԲ-ի գնահատականների համաձայն՝ Հայաստանն ունի բավարար արևային և վերականգնվող Էներգիայի ներուժ հաջորդ տասնամյակում ներքին ԷլեկտրաԷներգիայի արտադրությունը զգալիորեն մեծացնելու համար՝ համապատասխանաբար կրճատելով վառելիքի ներմուծման պահանջարկը և արտաքին Էներգետիկ խոցելիությունը:

Սա նաև այն քիչ ոլորտներից մեկն է, որտեղ բարեփոխումները միաժամանակ խթանում են տնտեսական արդյունավետությունը, Էներգետիկ անվտանգությունը և աշխարհաքաղաքական դիվերսիֆիկացիան: Ի տարբերություն որոշ այլ ոլորտների՝ այստեղ իրականացումը չափելի է, տեխնիկապես ստուգելի և սերտորեն կապված է ԵՄ-Հայաստան Դիմակայունության և աճի ծրագրի շրջանակներում ստանձնած կոնկրետ պարտավորությունների հետ: Հետևաբար, այս ոլորտում քաղաքացիական հասարակության մոնիթորինգն առավել արդյունավետ է, երբ կենտրոնանում է նախագծերի մակարդակի իրականացման, գնումների թափանցիկության և ենթակառուցվածքների ժամանակացույցի վրա, այլ ոչ թե լայն քաղաքականության հայտարարությունների վրա:

Թվային տնտեսություն. հենվելով արդեն իսկ առկա արդյունքների վրա

Հայաստանի թվային ոլորտը մնում է նրա ամենադինամիկ տնտեսական ոլորտներից մեկը, որն արդեն իսկ կազմում է ՀՆԱ-ի զգալի ու աճող մասը և արդեն մասամբ ինտեգրված է եվրոպական և համաշխարհային արժեքային շղթաներին: Ի տարբերություն այլ ոլորտների՝ այն նաև ավելի քիչ է սահմանափակված ԵԱՏՄ կարգավորող շրջանակներով, ինչն այն դարձնում է Հայաստան–ԵՄ տնտեսական ինտեգրման խորացման առավել բնական և իրատեսական ուղղություններից մեկը:

ԵՄ հենանիշներին հետագա համապատասխանեցումը՝ հատկապես Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգի (GDPR)

պահանջների ներդրումը, Horizon Europe ծրագրին մասնակցությունը, ինչպես նաև կիբեռանվտանգության և թվային կառավարման եվրոպական շրջանակների ընդունումը, կարող են էապես ընդլայնել աութսորսինգի, ֆինանսական տեխնոլոգիաների և տվյալների մշակման ոլորտներում ավելի բարձր արժեք ունեցող պայմանագրերի հասանելիությունը:

Արտահանման հնարավորությունների ընդլայնումից բացի՝ այս ոլորտն ունի նաև ներքին կարևոր ազդեցություն: Այն նպաստում է բարձր որակավորում պահանջող աշխատատեղերի ստեղծմանը և կարող է մասամբ մեղմել երկարաժամկետ «ուղեղների արտահոսքի» միտումները, այդ թվում՝ վիզաների ազատականացման հետևանքով առաջացածները:

Ռազմավարական հաղորդակցություն և ԵՄ ինտեգրման դինամիկայի վերաբերյալ իրազեկվածության բարձրացում

Հայաստան-ԵՄ ինտեգրման հիմնական կառուցվածքային մարտահրավերներից մեկը հանրության սահմանափակ ընկալումն է, թե իրականում ինչ է ենթադրում գործընթացը: Չնայած եվրոպական կողմնորոշման ընդհանուր աջակցությունը համեմատաբար ուժեղ է, այն հաճախ հիմնված է լայն ընկալումների, այլ ոչ թե կոնկրետ քաղաքականության, ժամանակացույցի և փոխզիջումների վերաբերյալ հստակ պատկերացումների վրա:

Սա անջրպետ է ստեղծում սպասումների և իրականացման միջև: Երբ բարեփոխումները դանդաղ են ընթանում կամ օգուտները անհավասար են, այս անջրպետը կարող է հանգեցնել հիասթափության և թուլացնել վստահությունը ինտեգրման օրակարգի նկատմամբ: Հաղորդակցման ջանքերը հիմնականում մտում են արտաքին ուղղվածության՝ կենտրոնանալով ԵՄ ինստիտուտների և գործիչների վրա, մինչդեռ Հայաստանում ներքին տեղեկատվական և կրթական աշխատանքները պակաս զարգացած են՝ մասնավորապես Երևանից դուրս գտնվող տարածաշրջանային համայնքներում, որտեղ բարեփոխումների ազդեցությունը տարբեր կերպ է զգացվում:

Արդյունավետ լինելու համար հաղորդակցությունը պետք է դիտարկվի որպես բարեփոխումների գործընթացի մի մաս: Սա նշանակում է բացատրել ոչ միայն ակնկալվող օգուտները, այլև պայմանները, հաջորդականությունը և սահմանափակումները: Անհրաժեշտ է ավելի

համակարգված կերպով համագործակցել տեղական ինքնակառավարման մարմինների, ՓՄՁ-ների, մասնագիտական խմբերի և տարածաշրջանային շահագրգիռ կողմերի հետ: Քաղաքացիական հասարակությունը և լրատվամիջոցները բարդ դեր են կատարում բարեփոխումների բովանդակությունը հանրության համար հասկանալի դարձնելու գործում, սակայն դրանց ազդեցությունը սահմանափակ է առանց պետության հետևողական հաղորդակցության: Այս իմաստով ռազմավարական հաղորդակցությունը ոչ թե երկրորդական, այլ նպաստավոր պայման է ԵՄ-ՀՀ ինտեգրման գործընթացը շարունակելու համար՝ հատկապես հաշվի առնելով դրա աստիճանական և անհավասար բնույթը:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ – ԲԱԺԻՆ 7

Հասարակական հարթություն, վիզայի առաջընթաց և ռազմավարական ժամանակացույց
ՄՀԻ Հայաստան 2026; ԵՄ վիզաների ազատականացման զեկույց 2026; ԵՄ դիմակայունության
և աճի ծրագիր 2026; ԵՄ ՀԸԳՀ 2026

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

► Առանց վիզայի մուտք Շենգենյան գոտի: Սա հանրության ամենասպասված կարճաժամկետ արդյունքներից մեկն է (ՄՀԻ/IRI, 2026): Սահմանված հեռանկիշների լիարժեք կատարման դեպքում այս նպատակը կարող է իրատեսորեն իրականացվել առաջիկա 3–4 տարվա ընթացքում: Քաղաքացիական հասարակության կողմից բարեփոխումների իրականացման համակարգված մշտադիտարկումը կարող է կարևոր ներդրում ունենալ Եվրոպական հանձնաժողովի գնահատման գործընթացում:

► ՏՏ ոլորտի ինտեգրում ԵՄ թվային միասնական շուկային: Այս ուղղությունը հիմնված է հստակ տնտեսական շահերի վրա, տեխնիկապես իրագործելի է և մեծ մասամբ չի հակասում Հայաստանի՝ ԵԱՏՄ շրջանակներում ստանձնած պարտավորություններին: Այդ պատճառով այն շարունակում է մնալ կարճաժամկետ տնտեսական ինտեգրման առավել իրատեսական ուղղություններից մեկը:

► Վերականգնվող Էներգիայի ոլորտի դիվերսիֆիկացիա: Այս ոլորտում առկա են ԵՄ ֆինանսավորման լայն հնարավորություններ, ներթափառական շահերի զգալի համընկնում

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

► Վիզայի ազատականացումը օգուտ է բերում անհատներին, բայց կարող է նպաստել որակյալ աշխատուժի արտահոսքին. այս փոխզիջման մասին անհրաժեշտ է բաց հանրային հաղորդակցություն, այլ ոչ թե ներկայացնել որպես եվրոպական ուղղության քննադատություն:

► ԵՄ նկատմամբ դրական վերաբերմունքը լայն տարածում ունի, սակայն մակերեսային բնույթ՝ 44 տոկոսը բավարար չափով տեղեկացված չէ ՀԸԳՀ պահանջներից (IRI 2026). սա ոչ միայն առավարության հաղորդակցության, այլև քաղաքացիական հասարակության հանրային իրազեկման աշխատանքի բացթողումն է:

► ԵՄ-ի վերաբերյալ գյուղական և քաղաքային տրամադրությունների տարբերությունը. IRI 2026 թվականի տվյալներն արձանագրում են որ երևանի և փոքր քաղաքների միջև եվրոպական ինտեգրման նկատմամբ աջակցության տարբերությունը գերազանցում է 20 տոկոսային կետը: Այս անհամաչափությունը կարող է վերածվել քաղաքական խոցելիության, եթե եվրոպական ինտեգրման օգուտները տեսանելի չդառնան նաև մայրաքաղաքից դուրս բնակվող

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

և երկարաժամկետ ռազմավարական առավելություններ, որոնք պահպանվում են անկախ իշխանության փոփոխությունից:

► Erasmus+ և Horizon Europe ծրագրեր: Այս ծրագրերը նպաստում են մարդկային կապիտալի զարգացմանը և ինստիտուցիոնալ համագործակցության կայուն ցանցերի ձևավորմանը, որոնք պահպանվում և ամրապնդվում են անկախ կոնկրետ կառավարություններից կամ ընտրական ցիկլերից՝ ժամանակի ընթացքում բազմապատկելով իրենց արժեքն ու ազդեցությունը:

► Հայկական սփյուռքը ԵՄ երկրներում. հայկական շահերի պաշտպանության և ներդրումների ներգրավման ուղի, որը նպաստում է հասարակական կապերի խորացմանը:


ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

Քաղաքացիների համար՝ ստեղծելով լրացուցիչ հնարավորություններ եվրոպական օրակարգի դեմ ընդդիմադիր մոբիլիզացիայի համար:

► 2026 թվականի հարցման համաձայն՝ քաղաքացիների 52 տոկոսը մտահոգված է, որ եվրոպական ինտեգրումից հիմնականում շահելու են քաղաքական և տնտեսական էլիտաները: Եթե բարեփոխումների արդյունքները տեսանելիորեն չարտացոլվեն շարքային քաղաքացիների և տնային տնտեսությունների կյանքում, այդ մտահոգությունը կարող է վերածվել ինքնահրականացող քաղաքական խոսույթի:

► 2018 թվականից հետո ձևավորված սպասումները չեն արդարացվել այն արագությամբ, որը հասարակության մի մասը կանխատեսում էր: Հանրային կայուն աջակցությունը պահպանելու համար անհրաժեշտ են ոչ թե նոր գազաթնաժողովներ և քաղաքական հայտարարություններ, այլ վաղ փուլում արձանագրվող, քաղաքացիների համար շոշափելի արդյունքներ:

ՎԻՉԱՆԵՐԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՆԱՆԻՇԱՅԻՆ ԱՌԱՋՆԹԱՑ. ԵՅ ՎԻՉԱՆԵՐԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԹԱՑԻ ԶԵԿՈՒՅՑ 2025-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐ



Վիզաների ազատականացման չափանիշների կատարման առաջընթաց եվրոպական հանձնաժողովի վիզաների ազատականացման առաջընթացի զեկույց, 2025-2026 թթ.

Եզրակացություն. ռազմավարական համբերություն և գործընկերության երկար ճանապարհ

Հայաստանի հարաբերությունները ԵՄ հետ հասել են մի փուլի, որտեղ կենտրոնական հարցը այլևս այն չէ, թե արդյո՞ք համագործակցությունը կշարունակվի, այլ այն, թե որքան խոր և որքան կայուն կարող է այն զարգանալ: Վերջին մի քանի տարիները ցույց են տվել, որ երկու կողմերն էլ ունեն քաղաքական կամք՝ խորացնելու համագործակցությունը բավականին լայն շրջանակի ոլորտներում: Կառավարման բարեփոխումը, տնտեսական արդիականացումը, անվտանգության ոլորտում համագործակցությունը, կապակցվածությունը, Էներգետիկայի դիվերսիֆիկացիան և մարդկանց միջև շփումները դարձել են գործընկերության անբաժանելի մասեր, որոնք զգալիորեն ավելի հավակնոտ են, քան այն, որը նախատեսված էր 2017 թվականին ՀԸԳՀ-ի առաջին ստորագրման ժամանակ:

Արձանագրված առաջընթացը չպետք է թերագնահատել: Հայաստանն այսօր վայելում է Եվրամիության հետ քաղաքական ներգրավվածության այնպիսի մակարդակ, որը նրան դասում է Արևելյան գործընկերության շրջանակներում ամենաակտիվ գործընկերների շարքը: ՀԵՄԱ-ի տեղակայումը, ՀԳԱՄ-ի ստեղծումը, Դիմակայունության և աճի ծրագրի միջոցով ֆինանսական աջակցության ընդլայնումը, անվտանգության ոլորտում համագործակցության աճը, ինչպես նաև վիզաների ազատականացման երկխոսության մեկնարկն ու զարգացումը՝ այս ամենը վկայում է հարաբերությունների մասին, որոնք շատ ավելի հեռու են գնացել ավանդական եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներից: Միևնույն ժամանակ, այս զեկույցում պնդվել է, որ Հայաստանի եվրոպական ուղղության առջև ծառացած ամենակարևոր մարտահրավերները ավելի շատ ներքին են, քան արտաքին: Ժողովրդավարության կոնսոլիդացիան մնում է թերի: Դատական անկախությունը մնում է փխրուն: Հանրային վստահությունը ինստիտուտների նկատմամբ մնում է անհավասար: Տնտեսական դիվերսիֆիկացիան մնում է ռազմավարական անհրաժեշտություն, այլ ոչ թե կայացած փաստ: Այս մարտահրավերները բնորոշ են ոչ միայն Հայաստանին: Դրանք ուղեկցել են հետխորհրդային տարածքում ինտեգրացիոն յուրաքանչյուր խոշոր գործընթացի: Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի փորձը ցույց է տալիս, որ

ինստիտուցիոնալ բարեփոխումները իրականացվում են ոչ թե օրենքների ընդունման, այլ քաղաքական բանակցությունների, իրականացման, շտկման և վերահսկողության շարունակական գործընթացի միջոցով:

Այս փորձից բխող ամենակարևոր դասը թերևս այն է, որ եվրոպական ինտեգրացիան հաջողության է հասնում, երբ այն դառնում է համազգային նախագիծ, այլ ոչ թե որևէ կոնկրետ կառավարության կամ քաղաքական կուսակցության օրակարգ: Ընտրական ցիկլերը կարևոր են, կառավարությունները փոխվում են, իսկ քաղաքական առաջնահերթությունները վերանայվում են: Կայուն եվրոպական ինտեգրումը պահանջում է ինստիտուտներ և քաղաքացիական հասարակության խմբեր, որոնք կարող են պահպանել բարեփոխումների տեմպը՝ անկախ քաղաքական հանգամանքներից:

Այս պատճառով հաջողության վերջնական չափանիշը չի լինի ստորագրված համաձայնագրերի, հյուրընկալված գազաթնաժողովների կամ ընդունված հռչակագրերի քանակը: Դա կախված կլինի նրանից, թե արդյոք շարքային քաղաքացիները զգալի բարելավումներ կզգան կառավարման որակի, տնտեսական հնարավորությունների, հանրային ծառայությունների և անձնական շարժունակության մեջ: Եվրոպական նախագծի լեգիտիմությունը Հայաստանում կախված կլինի ոչ այնքան աշխարհաքաղաքական պատումներից, որքան գործնական արդյունքներից:

Հետևաբար, գալիք տասնամյակը, հավանաբար, կբնութագրվի ոչ թե դրամատիկ առաջընթացներով, այլ աստիճանական կուտակմամբ: Առաջընթացը հաճախ անհավասար կլինի: Որոշ բարեփոխումներ ավելի արագ կընթանան, քան մյուսները: Արտաքին և անվտանգության ճնշումները կշարունակվեն: Քաղաքական և հասարակական դիմադրությունը կմնա գործընթացի մշտական առանձնահատկությունը: Սրանցից ոչ մեկը չպետք է դիտարկվի որպես ձախողման ապացույց: Այն արտացոլում է ժողովրդավարական հասարակություններում ինստիտուցիոնալ վերափոխման իրականությունը:

Հայաստանը կանգնած չէ Եվրոպայի և սեփական շահերի միջև ընտրություն կատարելու անհրաժեշտության առաջ: Ընդհակառակը, եվրոպական շրջանակն առկա ամենահուսալի գործիքներից մեկն է, որը

հնարավորություն է տալիս առաջ մղել Հայաստանի երկարաժամկետ բազմաթիվ նպատակներ՝ ավելի ամուր ինստիտուտների ձևավորում, ավելի բարձր դիմակայունություն, ավելի լայն տնտեսական հնարավորություններ, ինքնիշխանության ամրապնդում և իր քաղաքացիների համար ավելի կանխատեսելի ապագայի ապահովում:

Այս նպատակների իրագործումը կպահանջի ռազմավարական համբերատարություն, քաղաքական հետևողականություն և Հայաստան–ԵՄ ինտեգրմանը ոչ թե որպես մեկանգամյա իրադարձության, այլ որպես երկարաժամկետ գործընթաց:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԵՄ-Ի ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՏԵՍԱԿԱՆ ՓՈԼԵՐԸ ԸՍՏ ԺԱՄԱՆԱԿԱՅԱՏՎԱԾՆԵՐԻ

1

2025-2026․ ՀԱՍՏԱՏՎԱԾ

Քաղաքական շրջանակի ամրապնդում

Վաշինգտոնի խաղաղության շրջանակ (օգոստոս 2025թ.); ԵԶՀ և ԵՄ-Հայաստան երկկողմ գազաթնաժողով, Երևան (մայիս 2026թ.); ՀԵՄԱ-ի երկարաձգում; ՀԳԱՄ-ի գործարկում: Գործընկերության քաղաքական պրոֆիլը հասել է պատմական առավելագույն մակարդակի:

2

2026-2028․ ԱՌԱՋՆԱՅԵՐԹ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Վիզային ռեժիմի ազատականացման գործընթացի ավարտ, ՀԸԳՀ-ի խորացում և Էներգետիկ աղբյուրների դիվերսիֆիկացում

Միգրացիայի/ապաստանի և վիզային հեղանիշների կատարում՝ որպես կրիտիկական խոչընդոտի հաղթահարում; ՀԸԳՀ-ի միջնաժամկետ վերանայում՝ պայմանականության մեխանիզմների ուժեղացմամբ; ԵՄ աջակցությամբ իրականացվող առաջին վերականգնվող Էներգետիկ նախագծերի շահագործման մեկնարկ; «Դիմակայունության և աճի ծրագրի» միջնաժամկետ ֆինանսավորման հատկացումներ՝ պայմանավորված բարեփոխումների փաստաթղթավորված առաջընթացի պայմաններում:

3

2028-2031․ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ

Առանց վիզայի մուտք, ՏՏ ինտեգրում, դատական բարեփոխումների փուլ

Շենգենյան գոտի առանց վիզայի մուտքի հնարավորություն՝ պայմանով, որ վիզաների ազատականացման չափանիշների կատարումը պահպանվի առնվազն մեկ ընտրական ցիկլի ընթացքում՝ որպես ինստիտուցիոնալ կայունության հիմնական փորձաքար, ԵՄ թվային համակարգերի հետ ՏՏ ավելի խոր ինտեգրում, Դատական իշխանության անկախության չափելի բարելավում՝ ԵՄ հետ համագործակցության թափը պահպանելու համար:

Առաջադեմ գործընկերություն; կառուցվածքային տնտեսական ինտեգրում; ասոցացված անդամակցություն;

Ընդլայնված ՀԸԳՀ կամ «Առաջադեմ գործընկերություն» կամ նույնիսկ «Ասոցացված անդամակցություն» շրջանակը կախված է ընտրական ցիկլերի ընթացքում պահպանվող բարեփոխումների հետագծից; Հայաստանը հուսալիորեն հաստատվել է որպես տարածաշրջանային տարանցիկ հանգույց, իսկ կառավարման ցուցանիշները շարունակաբար մոտենում են ԵՄ անդամ պետությունների մակարդակին:

Միաժամանակ բարելավվում է հետխորհրդային տարածքում ընդհանուր աշխարհաբաղաբական համատեքստը: Սակայն ամեն ինչ կախված է խաղաղության շրջանակի կայունությունից և ԵԱՏՄ հարմարվողականության/խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու հեռանկարներից: «Պայմանական» բնութագրումն այստեղ հռետորական չէ. այն արտացոլում է քաղաքական փոփոխականների իրական անորոշությունը:

Հեղինակի մասին

Սերգեյ Մինասյանը Կովկասի ինստիտուտի փոխտնօրենն է, ինչպես նաև Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի հրավիրված գիտաշխատող: Նախկինում եղել է արտաքին ու անվտանգության քաղաքականության փորձագետ: Ունի պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա) և քաղաքական գիտությունների դոկտորի աստիճան՝ միջազգային հարաբերություններ (ՀՀ Պաշտպանության նախարարության Ազգային պաշտպանական հետազոտական ինստիտուտ): Նա եղել է Ռուսիայում ՀՀ դեսպան (2017–2023) և ունի ՀՀ արտակարգ դեսպանորդի և լիազոր նախարարի դիվանագիտական աստիճան:

